


*ՀՀ Կոտայքի մարզի Ջրագղան համայնք,
«Սևան» ԲՀԿ-ի տարածքում նոր մասնաշենքերի
կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն /ԼՐԱՄՇԱԿՎԱԾ/*



ՀՀ արդարադատության նախարարության «Սևան» քրեակատարողական
հիմնարկ

2024թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հավելվածներ.....	4
2. Տեղեկատվություն գործունեության վերաբերյալ.....	4
3. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացները.....	4
4. Նախաձեռնողի անվանումը, գտնվելու վայրը, հաշվետվության մշակման հիմքերը և նպատակը.....	5
5. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի և շրջակա միջավայրի նկարագիրը.....	5
5.2. Շրջակա միջավայրի բնութագրերը.....	8
5.2.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը.....	8
5.2.2. Ֆիզիկաաշխարհագրական պայմանները.....	9
5.2.3. Սեյսմիկա և երկրաբանություն.....	9
5.2.4. Կլիմա և օդային ավազան.....	10
5.2.5. Հողային ռեսուրսներ.....	14
Հողային ռեսուրսներ.....	14
5.2.6. Ջրային ռեսուրսներ.....	16
5.2.7. Կենսաբազմազանություն.....	18
5.2.8 Բնության հատուկ պահպանվող տարածքներ.....	22
5.2.9. Պատմության և մշակութային հուշարձաններ.....	23
5.2.10. Սոցիալ-տնտեսական.....	26
6. Նախատեսվող գործունեության բնութագիրը, արտադրական հզորություններ, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները (շինարարության, շահագործման, փակման փուլերում).....	29
7. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.....	35
8.1 Օդային ավազան.....	41
8.2 Հողային ռեսուրսներ.....	49
8.3 Ջրային ռեսուրսներ.....	49
8.4 Կենսաբազմազանություն.....	50
8.5 Թափոններ.....	50
8.7 Արտակարգ իրավիճակներ.....	52
8.8 Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը./Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն/.....	52
Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ.....	52
8.9 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.....	53
8.10 Սոցիալական.....	53

8.11 Բարեկարգում և կանաչապատում.....	53
9. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը/կառավարման պլան/.....	53
9.1 Օդային ավազան.....	54
9.2 Հողային ռեսուրսներ.....	54
9.3 Ջրային ռեսուրսներ.....	55
9.4 Կենսաբազմազանություն.....	56
9.5 Թափոններ.....	56
9.6 Աղմուկ և թրթռում.....	57
9.7 Արտակարգ իրավիճակներ.....	57
9.8 Մարդու առողջություն. Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն.....	59
9.9 Էներգախնայողություն.....	60
9.10 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.....	60
9.11 Սոցիալական.....	60
Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է.....	60
9.12 Լանդշաֆտ.....	60
9.13 Բարեկարգում և Կանաչապատում.....	61
10. Նախատեսվող գործունեության ազդեցության Մոնիթորինգ.....	61
11.Բողոքների ընթացակարգ.....	62
12. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան.....	63
13.Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ.....	76
14. Հանրային քննարկումներ.....	81
15.ՇՄԱԳ հաշվետվության կազմման իրավական հիմքերը.....	81
Գրականություն.....	85

1. Զավելվածներ

Զավելված 1. **Տարածքի սեփականության իրավունքի վկայականը**

Զավելված 2. Ծարտարապետա-հատակագծային առաջադրանքը

Զավելված 3. Տարածքի հատակագիծը

Զավելված 4. «Վեոլիա ջուր» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանը

Զավելված 5. Գազի թույլտվությունը

Զավելված 6. «ՅԷՑ» ՓԲԸ-ի տեխ. պայմանը

2. Տեղեկատվություն գործունեության վերաբերյալ

Զաջվետություն - ԶԶ Կոտայքի մարզի Զրազդան համայնք,
«Սևան» ԶԶԿ-ի տարածքում նոր մասնաշենքերի կառուցում

Նախաձեռնող- «ՎԱՆԱՐԽ» ՍՊԸ

**Գործունեության իրականացման
փաստացի հասցեն**

- ԶԶ Կոտայքի մարզի Զրազդան համայնք,

3. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացները

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ համաձայն:

Համաձայն Օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա ենթակետի Զադաքաշինության բնագավառում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա են. «Զադաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ և ավելի, վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000 քմ և ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով»:

Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա ենթակետի՝

ներկայացված նախատեսվող գործունեությունը ներառված է Բ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Բ կատեգորիայի ընթացակարգով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ, որոնք կվեղմեն, նվազագույնի կհասցնեն կամ կբացառեն հնարավոր բացասական ազդեցությունները: Նախնական գնահատման հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

4. Նախաձեռնողի անվանումը, գտնվելու վայրը, հաշվետվության մշակման հիմքերը և նպատակը

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է «ՎԱՆԱՐԽ» ՍՊԸ -ի կողմից, որի իրավաբանական հասցեն է՝ համայնք Վանաձոր Տաթևի փողոց 14, Գործունեությունը նախատեսվում է իրականացնել ՀՀ ԱՆ «Սևան» քրեակատարողական հիմնարկի տարածքում՝ Նոր մասնաշենքի կառուցում:

Շենքի նախագծման համար հիմք են հանդիսացել.

- Կոտայքի մարզի Հրազդան համայնքապետարանի կողմից 04.12.2023թ. տրված N 152 ճարտարապետահատակագծային առաջադրանքը և սեփականության վկայականը՝ N016828 հավելված 3:

- Համապատասխան թույլտվությունները:
- Շենքի կառուցման նախագծային փաստաթուղթը, հատակագիծը:

Նախատեսվող գործունեության նպատակը:

Նախատեսվում է ԱՆ «Սևան» քրեակատարողական հիմնարկի տարածքում կառուցել Նոր բնակելի մասնաշենքեր՝ կալանավորված անձանց և դատապարտյալների պահման նպատակով:

Հողի նպատակային նշանակությունը բնակավայրի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

5. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի և շրջակա միջավայրի նկարագիրը

5.1 Ենթակա տարածք. կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է Կոտայքի մարզի Հրազդան համայնքում՝ «Սևան» քրեակատարողական հիմնարկի տարածքում: Հողամասի իրավունքի տեսակը՝ սեփականություն: Տարածքը

կառուցապատված է: Կից գտնվում են գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ, Մ-2 միջպետական նշանակության ճանապարհ, ինժեներական գծեր հաղորդակցուղիներ: Տարածքում բացակայում են պատմամշակութային և բնության հուշարձաններն, ինչպես նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները: Համաձայն Անշարժ գույքի սեփականության վկայականի հողի նպատակային նշանակությունը բնակավայրի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Հրազդան քաղաքից մոտ 2500 մ հեռավորության վրա:

Գործունեության ենթակա տարածքում առկա են են ինժեներական ենթակառուցվածքները՝ գազամատակարարման, էլեկտրամատակարարման, ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերը: Ենթակա տարածքում գործունեության իրականացման նպատակով ծառեր, թփեր չեն հատվելու:

Տարածքի ինժեներատեխնիկական պայմանները ներկայացված է համաձայն՝ «Հայր և որդի Տիտիգյաններ» ՍՊԸ կողմից տրված ինժեներատեխնիկական ուսումնասիրությունների և եզրակացության: Տեղամասի երկրաբանական կտրվածքը հետազոտված խորությունների սահմաններում ներկայացված է գրունտների 4 տարբեր շերտերով: Ուսումնասիրվող տարածքում հորատված խորությունների սահմաններում գրունտային ջրերի տեղամասերը չեն բացահայտվել և ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 15մ-ից ավելի խորը հորիզոններում:



+

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքի սահմաններում գեոմորֆոլոգիական տեսակետից տարածաշրջանը բնորոշվող ռելիեֆային հիմնական տարրերն են հյուսիսից՝ Փամբակի, հարավ-արևմուտքից՝ Ծաղկունյաց, արևելքից և հարավ-արևելքից՝ Գեղամա լեռնաշղթաների մաս կազմող սարավանդները: Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կտրվածքում մասնակցում են Չորրորդականի հասակի լավաները, որոնք ներկայացված են, բեկորային բազալտներով: Այս ապարները

հիմնականում ծածկված են տեխնածին ծագման առաջացումներով, որոնք ներկայացված են լիցքային գրունտներով, ավազակավերի, կավավազների, խճի, մանրախճի պարունակությամբ:

Շրջանի երկրաբանական պայմանները Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կտրվածքում մասնակցում են ժամանակակից չորրորդական հասակի լավային հոսքեր: Այս ապարների արտաքին շերտը հիմնականում ծածկված են դեյուվիալ-պրոյուվիալ ծագման նստվածքներով:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Տարածքը՝ կախված երկրաբանական կտրվածքից, համարվում է մթնոլորտային տեղումների ինֆիլտրացիոն գոտի: Ստորերկրյա ջրերը բեռնաթաձվում են Հրազդան գետը: Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են: Ուսումնասիրվող տարածքում գրունտային ջրերի տեղամասերը ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 15մ-ից ավելի խորը հորիզոններում:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ մեր ուսումնասիրվող տարածքում բացակայում են:

Շրջանի սեյսմիկ պայմանները

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի, տեղազնվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.4g$ արագացմամբ, 8-9 բալլ սեյսմիկությամբ:

Կլիմա. Ուսումնասիրվող տարածքը գտնվում է «ցուրտ» կլիմայական շրջանում: Բնորոշ է համեմատաբար զով ամառներ՝ցուրտ ձմեռներ: Գրունտի սառչման առավելագույն խորությունը ուսումնասիրվող տարածքում կազմում է 92 սմ է, Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը 72%, Քամու միջին տարեկան արագությունը 2.1մ/վ, ձյան ծածկույթի հաստությունը հասնում է 132 սմ:

Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը. Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման և ֆոնդային կյուլերի տվյալների, գրունտների լաբորատոր հետազոտության տվյալների ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հետևյալ գրունտներից վերևից-ներքև.

Շերտ 1- Հողաբուսական շերտ ավազակավի պարունակությամբ: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՍՆԻՊ IV-5-82-ի (9ա) I կարգ:

Շերտ-2 Տարբեր ապարների մանրախճա-խճավազային նստվածքներ ավազակավի, կավավազի լցնումով: Գրունտը միջին խոնավ է և միջին խտության: Ժամանակակից դեյուվիալ-պրոյուվիալ առաջացումներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՍՆԻՊ IV-5-82-ի (13) IV կարգ է:

Շերտ-3 Բեկորային բազալտներ ամուր, մոխրագույն, կապտամոխրագույն, տեղ-տեղ ծակոտկեն և ճեղքավորված: Շերտում լցանյութը կավավազային է 20-25%: Ժամանակակից չորրորդական հասակի ապարներ են: Գրունտներն ըստ շահագործման դժվարության համաձայն ՍՆԻՊ IV-5-82-ի (6ե) VI կարգ է:

Շերտ-4 Հրաբխային տարբեր ապարների թեթևակի գնդավորված խճաքարա-խճավազային նստվածքներ 25-30% մոխրա-սպիտակահողագույն ավազակավավազային լցանյութով: Ժամանակակից չորրորդական հասակի դեյուվիալ-պրոյուվիալ առաջացումներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՍՆԻՊ IV-5-82-ի (12) V կարգ է:

Համաձայն եզրակացության՝ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող շինությունն կառուցելու համար, ապահովելով գրունտերի միասեռությունը, որպես հիմնատակ առաջարկվում է.

- շերտ 2-ը / մանրախճա-խճավազային նստվածքներ /, որոնք ըստ սեյսմիկ հատկությամբ (ՀՀՇՆ 20.04.2020թ-ի) 2-րդ կարգ են:
 - ✓ Դիմադրությունը $R = 3.0 կգ/սմ^2$
 - ✓ Ընկրկելիության գործակիցը $K_0 = 4000 տ/ս^3$
- շերտ 3-ը /բեկորային բազալտներ /, որոնք ըստ սեյսմիկ հատկությամբ (ՀՀՇՆ 20.04.2020թ-ի) 2-րդ կարգ են:
 - ✓ Դիմադրությունը $R = 6.0 կգ/սմ^2$
 - ✓ Ընկրկելիության գործակիցը $K_0 = 20000 տ/ս^3$
- շերտ 4-ը / Խճաքարա-խճավազային նստվածքներ /, որոնք ըստ սեյսմիկ հատկությամբ (ՀՀՇՆ 20.04.2020թ-ի) 2-րդ կարգ են:
 - ✓ Դիմադրությունը $R = 5.0 կգ/սմ^2$
 - ✓ Ընկրկելիության գործակիցը $K_0 = 6000 տ/ս^3$

Կառուցապատվող տարածքի հեռավորությունը կից ենթակառուցվածքներից գտնվում է 12-145մ հեռավորությունների վրա:

Տարածքի իրադրության սխեմաները

Գծապատկեր 1


5.2. Շրջակա միջավայրի բնութագրերը

5.2.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը.

Կոտայքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական մասում, ծովի մակերևույթից մոտ 900- 2500մ բարձրության վրա: Տարածքն ընդգրկում է Հրազդան գետի վերին և միջին ավազանը, ինչպես նաև Մարմարիկ գետի ավազանն ամբողջությամբ: Հյուսիսից սահմանափակվում է Գուբանասար, իսկ հյուսիս-արեւելքից՝ Հատիսի լեռնազանգվածներով: Հարավ-արևմուտքում աստիճանաբար ցածրանալով՝ ձուլվում է Արարատյան դաշտին:

Հիմնական լեռնագրական միավորներն են Կոտայքի և Եղվարդի բլրաալիքային սարավանդները, Մարմարիկի վտակներով կտրտված Փամբակի լեռնաշղթայի լանջերը, Գեղամա լեռնաշղթայի լեռնաճյուղերն ու լավային հոսքերը:

Կոտայքի մարզի բնական պայմաններն ու հարստությունները բազմազան են: Մարզի տարածքն աչքի է ընկնում բարձր լեռնագագաթներով ու խորը կիրճերով, լայնարձակ գետահովիտներով ու մեղմաթեք սարավանդներով, լավաների մեջ գոյացած բազալտե սյունաձև առանձնացումներով՝ անձեռակերտ բազմանիստ պրիզմաների տեսքով:



5.2.2 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները.

Տարածաշրջանի աշխարհագրական դիրքն ընդհանուր առմամբ նպաստավոր է: Մարզում Գեղամա լեռները կազմող հրաբխային ապարների մեջ ներծծվող ջրերի աղբյուրների տեսքով դուրս են գալիս լեռների ստորոտներում, ինչպես նաև Հրազդան և Ազատ գետերի կիրճերում, որոնցից են Քառասունակնի, Արզնիի և Գառնիի աղբյուրները: Հրազդան և Ազատ գետերի կիրճերի առանձին հատվածներում առկա են բնական հիանալի հուշարձաններ:

Կոտայքի մարզում են գտնվում Արզնի և Հանքավան առողջարանները (հանքային աղբյուրների մոտ), Մարմարիկի առողջարանային գոտին՝ բազմաթիվ հանգստի ու առողջարանական ճամբարներով, Ծաղկածորը՝ մարզական օլիմպիական համալիրով:

Հրազդանի քաղաքային համայնքի տարածքը գտնվում է Սևանի ֆիզիկաաշխարհագրական շրջանի Մարմարիկ-Հրազդանի լեռնատափաստանային, լեռնաանտառային ենթաշրջանում, Արարատյան գոգավորության նախալեռնային ենթաշրջանի հարևանությամբ՝ կրելով նաև այդ ենթաշրջանի կլիմայական ազդեցությունը:

Հրազդան քաղաքը տեղակայված է Հրազդան գետի վերին և միջին ավազանում՝ Փամբակի, Ծաղկունյաց և Գեղամի լեռնաշղթաներով՝ պատված թույլ մասնատված լավային ծածկույթով: Միջբլուրային տարածքները ծածկված են դելուվիալ ապարների շերտով: Տարածքի մեծ մասն ունի 1500-2400 մ բարձրություն: Առավելագույն բարձր կետը Թեժ լեռան կատարն է՝ 3101մ: Հյուսիսում ձգվում են Մարմարիկի վտակներով խիստ մասնատված Փամբակի լեռնաշղթայի լանջերը, արևելքում Գեղամա լեռնաշղթայի հյուսիս-արևմտյան լեռնաճյուղերն ու լավային հոսքերը: Հարավ-արևելքում բարձրանում են Գուրթանասար, Մենակսար հրաբխային կոները:


5.2.3. Սեյսմիկա և երկրաբանություն

Տարածաշրջանի և Հրազդան քաղաքի ինժեներատեղեկագրական պայմանները բարենպաստ են: Տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին-կավիճ, միջին-միոցենի հասակի մետամորֆիզացված բյուրեղացված

թերթաքարերը, մարմարային ապարները, չորրորդական հասակի անդեզիտաբազալտներով և անդեզիտադաջիտներով լավաները՝ ծածկված կրաքարերով, նստվածքային և հրաբխային ապարներով, ավազային և խոշորաբեկորային գրունտներով:

Շրջանի սեյսմիկ պայմանները. համաձայն ՀՀՇՆ-20.04.2020թ.-ի նորմատիվային փաստաթղթի՝ ըստ սեյսմիկ հատկության տարածաշրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max}=0.4g$ արագացմամբ, 9 և ավելի բալլ սեյսմիկությամբ:

Նկար 1



5.2.4. Կլիմա և օդային ավազան

Գործունեության տարածքի կլիմայական պայմաններն ներկայացված են ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը՝ Հրազդան քաղաքի համար:

Աղյուսակ 1.

Օդի ջերմաստիճանը, °C

**ՕԴԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ,
ՁՄՈՒՆ ՍԿԻՋԲԸ, ՎԵՐՋԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

Աղյուսակ 1 Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Հրազդան	-7.8	-6.1	-1.5	5.2	10.3	14.1	17.4	17.4	13.7	7.6	1.3	-4.8	5.6	-31.5	35.0

Օդի հարաբերական խոնավությունը (%)
Աղյուսակ 2

ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																	
	ըստ ամիսների													Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջին ամսական		Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	
19. Հրազդան		79	77	74	71	70	70	68	65	66	70	76	79	72	79	69	68	52

Աղյուսակ 3.

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը
ՄԹՆՈՂՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը _____ միջին ամսական _____ մմ _____ օրական առավելագույն													Տարեկան	Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների															
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	

19. Հրազդան	46	55	66	88	100	66	45	30	33	61	52	47	689	266	423
	40	47	45	52	52	42	50	42	49	64	49	34	64		

Քամի


Աղյուսակ 4.

Աղյուսակ 15 Քամի (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Միջին արագությունը, մ/վ	ըստ ուղղությունների	Անորորի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան								
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16		
23. Հրազդան	հունվար	2	5	11	4	19	39	18	2	27	1.9	Արլ	2.9	Արմ	2.4		
		2.3	2.4	2.0	1.4	1.9	2.3	2.4	1.7								
	ապրիլ	4	14	19	6	13	21	20	3	15	2.1						
		2.3	2.7	2.2	1.8	1.9	2.3	2.4	2.0								
	հուլիս	8	45	35	2	2	3	4	1	7	2.8						
		3.5	3.2	2.9	1.9	2.0	1.9	2.4	2.2								
	հոկտեմբեր	3	12	23	6	11	20	22	3	26	1.7						
		2.0	2.2	2.0	1.7	1.8	2.1	2.2	2.0								

Նկար 2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ
ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ ՇՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**



Հրազդան քաղաքը գտնվում է ծովի մակարդակից 1765մ բարձրության վրա ձմեռը, որին բնորոշ է ցուրտ կլիմայական գոտին: Գարունը երկարատև է, զով և խոնավ: Ամառը զով է, քամու օպտիմալ խոնավությամբ, միջին ջերմաստիճանը հուլիսին 160C, հունվարին՝ -120C հարաբերական խոնավությունը՝ 60-70%, քամու միջին արագությունը՝ 3,0-7,0մ/վ: Տեղումների միջին տարեկան քանակը կազմում է 689մմ:




Օդային ավազանի բնութագիրը. Հայաստանի Հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Հրազդան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Զաղաքում գործում է 17 շարժական դիտակետ և 1 անշարժ դիտակայան համաձայն՝ Գլխավոր (www.armmonitoring.am) Էլեկտրոնային կայք էջի:

Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը: Փոշով աղտոտվածություն կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով: Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական այլ գործընթացների ժամանակ: Մթնոլորտային օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) հետ համեմատությամբ:

Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գլխավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է: Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար 2024 թ-ի եռամսյակում կազմակերպության կողմից դիտարկումներ են կատարվել նաև Հրազդան քաղաքում: 2024 թվականի 1-ին եռամսյակում Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



5.2.5. Հողային ռեսուրսներ Հողային ռեսուրսներ

Կոտայքի մարզն աչքի է ընկնում իր խայտաբղետ հողաբուսական ծածկույթով: Այստեղ հիմնականում գերակշռում են լեռնատափաստանային և լեռնաշագանակագույն,

իսկ բարձրադիր վայրերում տարածված են ենթալայան լեռնամարգագետնային, սևահողանման ու դարչնագույն հողերը, սարավանդային հատվածներում շագանակագույն հողերը և չոր տափաստանային լանդշաֆտները: Լեռնալանջերի սևահողային ծածկույթի վրա ձևավորվել են լեռնային տափաստանները: Ծաղկունյաց լեռների և Մարմարիկի հովտի անտառների տակ տարածված են գորշ դարչնագույն հողերը, իսկ բարձրադիր լեռնային գոտում՝ լեռնամարգագետնային լանդշաֆտը: Բարձրադիր մասերում տարածված են խոտհարքներն ու ամառային արոտավայրեր:

Նկար 3.



Հրազդանի տարածաշրջանին բնորոշ են դարչնագույն անտառային հողերը՝ հզոր պրոֆիլով, խորը և ինտենսիվ կավայնացմամբ, վերին հորիզոնների զգալի հումուսացվածությամբ(5-8%), կլանման մեծ ծավալով: Հրազդան գետի առափնյա հատվածներում ներկայացված են միջին հզորության(50-80սմ) լեռնային սևահողերով:

Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գիտահատումն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն: Բուն գործունեության վայրում հողային ֆոնդը ենթարկված է անտրոպոգեն ազդեցությունների, անի որ նախկինում և այժմ տարածքը արդյունաբերական գոտի:

Համաձայն Գլխավոր (www.armmonitoring.am) Էլեկտրոնային Էջի՝ 2022 թվականի 2-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներ են իրականացվել նաև Կոտայքի մարզում: Ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.5-2.0 անգամ, պղնձի պարունակությունը՝ 17.0-46.3 անգամ, ցինկի պարունակությունը՝ 5.1-12.7 անգամ, քրոմի պարունակությունը՝ 4.3-26.7 անգամ, նիկելի պարունակությունը՝ 9.3-28.0 անգամ, կապարի պարունակությունը՝ 1.3-2.1 անգամ և արսենի պարունակությունը՝ 2.5-10.0 անգամ:

Հրազդան համայնքի հողերի աղտոտվածության վերաբերյալ Մոնիթորինգի Էլեկտրոնային կայք էջում տեղեկատվությունը բացակայում է: Իսկ բուն գործունեության տարածքում հողերի անալիզ չի արվել, քանի որ գործունեությունն իրականացվելու է արդեն կառուցապատված տարածքում:

5.2.6.Ջրային ռեսուրսներ

Կոտայքի սարավանդն ընկած է Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասից մինչև Գեղամա լեռների արևմտյան ստորոտը: Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքն (ՋԿՏ) ընդգրկում է 2 հիմնական ջրավազաններ՝ Հրազդան և Զասախ: Հրազդանի ՋԿՏ-ում ընդգրկված են 10 կմ և ավել երկարությամբ 20 գետեր, 1մլն մ³ և ավելի ծավալով 9 ջրամբարներ, բնական լճեր՝ Զարի և Ակնա, ինչպես նաև 7 առաջնային, 4 դերիվացիոն և 7 երկրորդային ջրանցքներ: Մարզի տարածքով են հոսում Հրազդան, Մարմարիկ, Գետառ, Ազատ գետերը: Այստեղ է գտնվում 3032մ բարձրության վրա գտնվող Ակնա լիճը: Գետի և լճի ջրերը մարզում օգտագործվում են ոռոգման նպատակով:



Հրազդանի տարածաշրջանում է գտնվում Հանքավանի ջրամբարը:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 6 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

Հրազդանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում:

Մակերևութային ջրերի որակը

Նկար 4.



Տարածքի խոշորագույն ջրային ռեսուրսը Սևանա լճից սկիզբ առնող և Արաքս գետի ձախ վտակ՝ Հրազդան գետն է: Գետն ունի 141կմ երկարություն, ավազանի մակերեսը կազմում է 2650կմ² է (առանց Սևանա լճի), սնումը կատարվում է հիմնականում ստորգետնյա(51%) և հալոցքային(37%) ջրերի հաշվին: Գետն աչքի ընկնում գարնանային վարարումներով և հորդացումներով՝ ամռանն ու աշնանը:

Մարմարիկ գետն իր վտակներով հանդիսանում է Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի մաս:

Ջրային ավազաններն աղտոտման են ենթարկվում մարդու գործունեության հետևանքով, ինչպես նաև տեղումների միջոցով անջատվող աղտոտող կյուլթերի միջոցով, առաջացնելով ջրավազանների կենսաբազմազանության, որակական կազմի, ջերմային, ռեժիմի փոփոխություններ: Հայաստանի Հանրապետությունում ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշման: ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը պարբերական մոնիթորինգի է ենթարկվում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Մոնիթորինգի տվյալների համաձայն՝ կենսածին կյուլթերի՝ ամոնիում և ֆոսֆատ իոնների կոնցենտրացիաները բարձր են Հրազդան, Ծաղկաձոր և Բասախ գետերի միջին և ստորին հոսանքներում գետերի ջրի մեջ կենցաղային կեղտաջրերի հեռացման հետևանքով: Համաձայն 2024թ. 1-ին եռամսյակի Գլխավոր (www.armmonitoring.am) էլեկտրոնային էջի՝ Հրազդան գետի ջրի որակը Բաղսի գյուղից ներքև և Արզնի ՀԷԿ-ից վերև հատվածներում փետրվարին և մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս),

Արգել գյուղից ներքև հատվածում ջրի որակը փետրվարին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «անբավարար» (4-րդ դաս): Մարմարիկ գետի ջրի որակը գետաբերանում փետրվարին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս):

Հիդրոերկրաբանական տեսակետից. Համայնքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բ արենպաստ են, բայց որոշակի բարդություն են առաջացնում կապված՝ երկրաբանական կառուցվածքի, ապարների լիթոլոգիական կազմի, ռելիեֆի և կլիմայի հետ: Գրունտային ջրերը(շերտային) կապված են դելյուվիալ-պրոյուվիալ և այլուվիալ-պրոյուվիալ նստվածքների հետ: Ջրային հոսքերը՝ պայմանավորված կավաավզային, խճային ապարների, լավային հոսքերի ջրառատությամբ, ձևավորում են բազմաթիվ տարբեր դեբիտային ելքերով ջրային ելքեր՝ աղբյուրների տեսքով:

Հրազդան գետի ձախակողմյան վտակների մի մասը գետնի տակ ներծծված ջրերի շնորհիվ գարնանը դուրս են ցայտում՝ «40 աղբյուր» անվանումով:

5.2.7. Կենսաբազմազույություն

Հայաստանը տիպիկ լեռնային երկիր է, որտեղ լանդշաֆտները և էկոհամակարգերը կազմում են բարդ բազմաֆունկցիոնալ համակարգ, որոնք նպաստում են հարուստ և ինքնատիպ կենսաբազմազանության ձևավորմանը: Հայաստանի ֆլորայի և ֆաունայի հիմնական կենսատիպերի աշխարհագրական տեղաբաշխումը պայմանավորված է վերընթաց գոտիականությամբ ու տարածքի տոպոգրաֆիական բազմազանությամբ, որի շնորհիվ յուրաքանչյուր գոտու կենսաբազմազանությունը բնորոշվում է իր տեսակային կազմով, որակական ու քանակական ցուցանիշներով: Հանդիսանում է նաև միգրացվող կենդանիների և չվող թռչունների տարանցիկ ճանապարհների խաչմերուկ:

Նկար 5.



Նախատեսվող գործունեության տարածաշրջանը գտնվում է չոր լեռնատափաստանային և օշինդրա-կիսանապատային գոտում, իսկ Փամբակի և Ծաղկունյաց լեռնաշղթաների ձախափնյա լանջերին բնորոշ է լեռնատափաստանային լանդշաֆտային գոտին: Մարզն ունի հարուստ և բազմատեսակ բուսականություն, որը պատկանում է Ապարանի ֆլորիստիկ շրջանին: Ամենատարծված բուսատեսակը կաղնին է, առանձին հատվածներում կաղնուտների տեսքով:

Տարածաշրջանին բնորոշ են ռեկրացիոն-բնապահպանական նշանակության անտառները:

Տարածաշրջանում տիրապետող են կիսանապատային, լեռնատափաստանային լանդշաֆտները՝ համապատասխան տափաստանային, նոսրանտառային, անտառային և մարգագետնային բուսականության տիպերով և վերջիններիս բնորոշ կենդանական աշխարհով:

Բուսական աշխարհ. Հրազդանի և հարակից տարածքների անտառային Էկոհամակարգերին բնորոշ են կաղնուտային, բոխուտային լայնատերև խառը անտառները ու հետանտառային նոսրանտառները: Այստեղ աճում են Կաղնի խոշորաեղջր(*Quercus macranthera*), բոխի (*Carpinus betulus*), բոխու տեսակներ (*Aser campestre*, *Aser trautvetteri*), արոսենի (*Sorbus umbelata*) և այլ՝ հացենի, թխկի, լորենի,

տոճի, թեղի, ալոճենի, մասրենի, հաղարջենի, ազնվամորի և այլ ծառաթփային բուսատեսակներ: Զաղաքին հարակից անտառներում հանդիպում են նաև վայրի տանձենի (*Pyrus* sp., *P. georgica*, *P. communis*) և խնձորենի (*Malus silvestres*): Կանաչապատ տարածքներում հանդիպում են եղևնի, նոճի, արևմտյան գիհի, կենսածառ արևելյան, սպիտակ/ լացող ուռենիներ, հացենի, լորենի: Թփուտներից տարածված են յասամանը, հաղարջը, նեղտերև փշատենի և այլն: Փամբակի և Ծաղկունյաց լեռների լանջերին տարածված են թխկու, կաղնու, արոսենու անտառները:

Տարածաշրջանի բուսականությունը հիմնականում լեռնատափաստանային տարախոտեր են, հացազգիների գերակշռությամբ՝ ողնախոտ(*Dactylis Woronovii*), սեզ տափաստանային (*Phleum phleoides*), դաշտավլուկ սոխուկավոր (*Poa bulbosa*), կելերիա սանրածև (*Koeleris cristata*), ցորնուկ ցգամազ (*Bromus squarrosus*), շյուղախոտ ակոսավոր (*Festuca sulcata*), մերձալպյան բարձրախոտերից՝ իշառվույտ նեպոլիտական (*Melilotus neapolitanus*), եղինջ երկտուն (*Urtica dioica*), ծվծվուկ կտրտված (*Silene multifida*) և այլն:

Նկար 6.



Կոտայքի մարզում աճում են 54 տեսակի բույսեր, որոք գրանցված են ՀՀ բույսերի Կարմիր գրքում: Կոտայքի մարզի և տարածաշրջանի ՀՀ Կարմիր գրքում գրանցված

բուսատեսակներից են՝ ճավշիր պարսկական (*Opopanax persicus* Boiss). Ճարտարուկ Արարատի (*Draba araratica* Rupr), Ճարտարուկ խոզնավոր(*Draba hispida* Willd), Էվսոմիա կլորատերև (*Eunomia rotundifolia* C. A. Mey.), Ջրահարս փոքր (*Najas minor*), Աղածաղիկ Կուլպական (*Halanthium kulpianum* (K. Koch Bunge), Երնջակա Վանատուրի(*Eryngium wanaturii* Woronow), ողնաթուփ վարսակային (*Acantholimon avenaceum*), Տերեփուկ Թախտաջյանի (*Centaurea Takhtajanii*) և այլն:



Նկ.7 ճավշիր պարսկական

Կենդանական աշխարհ. տարածաշրջանի կենդանական աշխարհին բնորոշ են անողնաշարավորների՝ միջատների, բզեզների, մորեխների տեսակային բազմազանությունը: Ողնաշարավոր կենդանիներից հանդիպում են կրիաներ, օձեր, մողեսներ, թռչուններից՝ սև անգղ, կեռնեխ, արտուկտ, կաքավ, ծիծեռնակ, ճանճորսներ և այլն, կաթնասուններից՝ եղջերուև, գայլը, գորշ արջ, վայրի խոզ, աղվես, աքիս, կզաքիս, չղջիկներ և այլն:

Կոտայքի մարզում ՀՀ Կարմիր գրքում գրանցված են անողնաշար կենդանիների՝ 62, ողնաշարավոր կենդանիների 28 տեսակներ:

Հրազդան գետի ակունքներում գտնվում է ՀՀ Կենդանիների Կարմիր գրքում գրանցված Հարթ խիտունջը(*Gyraulus laevis*):

Կոտայքի մարզում ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներից են՝ Մորեխ հայկականը(*Gomphocerus armeniacu*, Հաստածղրիղ լայնացած (*Bradyporus dilatatus*), Թամբակուրծք թարախահան(*Mylabris sedilithorax* Sumakovt սևամարմին (*Cylindronotus erivanus*), ապուրն (*Parnassius apollo kashtshenkoi* Sheljuzhko), Աֆրիկյան փրոթերեբիա(*Proterebia afra hyrcana*), Ալեքսանդր երկարաչափ թիթեռ (*Eupithecia alexandriana* Wardikian), Ռավազիկի մրջյուն(*Myrmica ravasinii* Finzi), Հայկական իծ(*Viperaa* (*Montivipera*): Թռչուններից՝ գառնանզղ(*Gypaetus barbatus* Linnaeus), ՓԳիշանզղ(*Neophron percnopterus* Linnaeus), Օձակեր արծիվ(*Circaetus gallicus*), Տափաստանային արծիվ(*Aquila nipalensis orientalis* Hodgson), Կարմրատո բազե(*Falco vespertinus* Linnaeus), Բվեճ(*Bubo bub*) և այլն: Երկկենցաղներից Կանաչ դողոշը (*Bufo viridis*), Սովորական ծառագորտը (*Hyla arborea schelkownikowi*), Լճագորտը (*Pelophylax ridibundus*) և Փոքրասիական գորտը (*Rana macrocnemis*), կաթնասուններից՝ Գորշ արջը(*Ursus arctos* Linnaeus):



Նկ.8 Ապոլոն



Նկ.9 Կարմրաոտ բազե

Տարածաշրջանի ջրային ավազաններում հանդիպում են կարմրախայտ, քուռի բեղլու, կողակ և այլ ձկնատեսակներ:


Նախատեսվող գործունեության տարածքում բացակայուն են Էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները, ինչպես նաև բացակայում են կենդանիների միգրացիոն ուղիները՝ տարածքի ուրբանացված լինելու, մարդու ազդեցության գոտում գտնվելու պատճառով:

Նախատեսվող գործունեության տարածքում բնական Էկոհամակարգերը բացակայում են, քանի որ տարածքը գտնվում է արդյունաբերական գոտում: Տարածքում չկան անտառային զանգվածներ, մոտակա անտառային նշանակության հողերը գտնվում են Ճաղկածորում, Մեղրածորում:

5.2.8 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Հայաստանի Հանրապետությունում կենսաբազմազանության պահպանումը, հիմնականում, իրականացվում է Բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ) (պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ), որտեղ կենտրոնացված է բուսական և կենդանական աշխարհի տեսակազմի մոտ (60-70)%-ը, ներառյալ հազվագյուտ, վտանգված, անհետացման եզրին հայտնված և Էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը:

Հայաստանի տարածքի 387 հազ. հա կամ 13%-ը բնության հատուկ պահպանվող տարածքներ են (ԲՀՊՏ)



Գործունեության տարածքն անմիջական սահմաններ ԲՀՊՏ-ների հետ չունի: Տարածքին ամենամոտը՝ «Արզական-Մեղրաձոր» պետական արգելավայրն է, որը ուսումնասիրվող տարածքից գտնվում է մոտ 2,6 կմ հեռավորության վրա:

«Արզական-Մեղրաձոր» պետական արգելավայրը ստեղծվել է 1971 թվականին՝ Մակերեսը՝ 13532 հա՝ կենդանական և բուսական աշխարհի հազվագյուտ տեսակների պահպանման նպատակով: Գտնվում է Մարմարիկ և Դալարիկ գետերի ավազաններում, 1600-2100մ բարձրությունների վրա: Արգելավայրի հիմնական բուսատեսակը կաղնու անտառներ են, տարածքում աճում են 800 տեսակի անոթավոր բույսեր, որոնցից 9-ը՝ գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

Կենդանատեսակներից արգելավայրում ապրում են 1800 տեսակի անողնաշարավորներ, 4 տեսակի երկկենցաղներ, 28 տեսակի սողուններ, մոտ 120 տեսակի թռչուններ, կաթնասուններ՝ այծյամը, գորշ արջը, վայրի խոզը, կովկասյան մարեհավը, աշլուսանը, ուլարը:

5.2.9. Պատմության և մշակութային հուշարձաններ

Կոտայքի մարզը հանդիսանում է Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակավայրերից մեկը: Մարզի տարածքում են գտնվում հազարից ավելի պատմամշակութային հուշարձաններ՝ եկեղեցական համալիրներ, մատուռներ, տուն-թանգարաններ: Համաձայն Կոտայքի մարզպետարանի Էլեկտրոնային կայքի՝ մարզում առկա է 3208 հուշարձան, 811 պահպանման միավոր, 2640 պատմամշակութային անշարժ հուշարձաններ, որոնք ՀՀ պետական սեփականություն են համարվում և օտարման ենթակա չեն: Մարզում կատարված են 18 հնագիտական պեղումներ,

բացված են քարեդարյան կայաններ, նախամարդու քարանձավներ, բրոնզեդարյան դամբարանադաշտեր, կիկլոպյան ամրոցներ:

Մարզի տարածքում են գտնվում հայկական հելլենիստական ճարտարապետության՝ մ.թ. 1 -ին դարում Արևի աստված Միհրի պատվին կառուցված Գառնիի տաճարը, Եղվարդի Ս. Աստվածածին եկեղեցին, Քրիստոնեական շրջանի հայկական վիմափոր ճարտարապետության եզակի ու բարձրարվեստ կոթող՝ Այրիվանք-Գեղարդը, Բջնիի բերդը, 13-րդ դարում կառուցված Կեչառիս վանական համալիրը և այլն:

Հրազդանի պատմամշակութային հուշարձանները տարբեր են ըստ կառուցման ժամանակահատվածի (Ք.ա. 2-1 հազարամյակից մինչև 12-15-րդ դար), ավելի բազմազան են 12-13-րդ դարերի հուշարձանները (եկեղեցիներ, ամրոցներ, գյուղատեղիներ): Տարբեր են նաև հուշարձանների պահպանվածության աստիճանները՝ սկսած ավերակներից մինչև լավ պահպանվածները:

Բնության հուշարձաններ. Հրազդան քաղաքի հուշարձանները ներկայացված են Հավելված 2-ում համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԿՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշման հավելված 7-ի:

Կոտայքի մարզում առկա են նաև բնության հուշարձաններ, որոնք համաձայն ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման հետևյալ են.

Աղյուսակ 5

	Երկարաբանական հուշարձաններ	
1.	«Անանուն» խզվածքներ	Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից հվ, ավազահանքի մոտ
2.	Թագավորանիստ խարամային կոնի պեմզաների և խարամների կոնտակտ	Կոտայքի մարզ, Եղվարդ քաղաքից 3.5 կմ դեպի հարավ 33. «Թագավորանիստ» խարամային կոն Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից 3 կմ հվ, Աշտարակ տանող խճուղու ձախ կողմում
3.	«Թագավորանիստ» խարամային կոն	Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից 3 կմ հվ, Աշտարակ տանող խճուղու ձախ կողմում
4.	Պեռլիտե փիղ» քարե քանդակ	Կոտայքի մարզ, Չարենցավան քաղաքից 2 կմ հվ, քարահանքի մոտ
5.	«Անանուն» բյուրեղային թերթաքարերի ու վերին կավճի կրաքարերի կոնտակտ	Կոտայքի մարզ, Բջնի գյուղի արևմտյան ծայրամասում
6.	Ծակ քար» բնական թունել	Կոտայքի մարզ, Բջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախ ափին
7.	Բազալտե երգեհոն» սյունաձև բազալտներ	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
8.	«Անանուն» քարայր սյունաձև բազալտներում	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1,0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
9.	«Անանուն» լանջային էրոզիա	Կոտայքի մարզ, Ազատ գետի

		աջակողմյան ափերին
10.	«Անանուն» լավային ծայքեր	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
11.	«Անանուն» խորշեր	Կոտայքի մարզ, Գողթ գյուղից մոտ 3.0 կմ հս-արլ
12.	«Հատիս» հրաբուխ	Կոտայքի մարզ, Չովաշեն գյուղից 2.0 կմ արմ
13.	«Ավազան» հրաբխային գմբեթ Կարենիս գյուղից 1.5 կմ հս-ար	Կոտայքի մարզ, Կարենիս գյուղից 1.5 կմ հս-ար
14.	«Կարենիս» հրաբխային գմբեթ	Կոտայքի մարզ, Կարենիս գյուղից 0.5 կմ հս-ար
15.	«Անանուն» ապարների բնորոշ մերկացում	Կոտայքի մարզ, Նուռնուս գյուղի և Արգելի ՅԷԿ-ի միջև
16.	«Անանուն» օբսիդիանի ելքեր	Կոտայքի մարզ, Ջրաբեր գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, Երևան-Սևան խճուղու աջ կողմում
17.	«Անանուն» քարե կուտակումներ	Կոտայքի մարզ, Զաղսի գյուղի հվ-արմ եզրին, Հրազդանի կիրճում
18.	«Գուլթանասար» հրաբուխ	Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 3 կմ հվ
19.	«Լեռնահովիտ» քարային կուտակումներ	Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 4-5 կմ հվ-արլ, «Թեգխարաբ» գյուղատեղիի մոտ
20.	Ձորաղբյուրի (Մանգյուսի) բրածո ֆլորա	Կոտայքի մարզ, գյուղ Ձորաղբյուր
	Ջրաերկրաբանական հուշարձաններ	
1.	«Հաղպրտանք» աղբյուր	Կոտայքի մարզ, Հրազդան քաղաքի Վանատուր (Աթարբեկյան) թաղամասի արլ ծայրամասում, 1.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1755 մ բարձրության վրա
2.	«Համով» աղբյուր	Կոտայքի մարզ, Ակունք գյուղի հվ-արմ ծայրամասում, եկեղեցու մոտ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա
3.	«Զաղցր» աղբյուր	Կոտայքի մարզ, Արզնի գյուղից 150 մ հվ-արմ, Հրազդան գետի ձախ ափին, ծ.մ-ից 1300 մ բարձրության վրա
4.	«Ձորի» աղբյուր	Կոտայքի մարզ, Գողթ գյուղից 0.3 կմ հս-արլ, Գողթ գետի աջ ափին, ծ.մ-ից 1580 մ բարձրության վրա
5.	«Ավազան» աղբյուր	Կոտայքի մարզ, Կաթնաղբյուր գյուղից 0.3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա
	Ջրագրական հուշարձաններ	
1.	«Սագերի» լիճ	Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ

		4 կմ հս
2.	«Վիշապա» լիճ	Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ արլ
3.	«Բազմալիճք» լիճ	Կոտայքի մարզ, Սևաբերդ գյուղից մոտ 3 կմ հս
4.	«Լուսնալիճ» լիճ	Կոտայքի մարզ, Սևաբերդ գյուղից մոտ 7 կմ հս-արլ
	Բնապատմական հուշարձաններ	
1.	«Ողջաբերդ» բնապատմական համալիր	Կոտայքի մարզ, Ողջաբերդ գյուղի հս-արլ մասում
	Կենսաբանական հուշարձաններ	
1.	«Ռեյիկտային կրկես Զյորոլի լեռան մոտ»	Կոտայքի մարզ, Արտավազ գյուղի մոտ
2.	«Ալպյան գորգ»	Կոտայքի մարզ, Մեղրաձոր-Ֆիոլետովո գրունտային ճանապարհի ամենաբարձր մասում (Փամբակ լեռնաշղթայի Ամպասարի գագաթային մասում, ծ.մ-ից 300 մ բարձրության վրա
3.	«Թանթրվենի, Տիգրանի»	Կոտայքի մարզ, Արզնի առողջարանի մոտ, Հրազդան գետի ափին, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա

Արտադրական տարածքը չի առնչվում Հրազդանի տարածաշրջանի պատմաշակութային և բնության հուշարձանների հետ, ամենամոտ բնության հուշարձանը «Անանուն» քարե կուտակումները գտնվում է 11,3կմ հեռավորության վրա:

5.2.10. Սոցիալ-տնտեսական

Կոտայքի մարզի տարածքը կազմում է 2076կմ², համայնքների թիվը՝ 11, քաղաքային բնակավայր՝ 7, գյուղեր՝ 61: Սահմանակից է Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու, Արարատի, Արագածոտնի մարզերին և մայրաքաղաք Երևանին:

Տարածքը Territory	2 076 քառ.կմ/ sq. km
Հայաստանի Հանրապետության տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, % Territory share of the marz in the territory of the Republic of Armenia, %	7.0
Համայնքներ, 2023 թ. տարեկգրի դրությամբ Communities, as of the beginning of 2023	11
Քաղաքներ Towns	7
Գյուղեր Villages	61
Բնակչության թվաքանակը 2023թ. տարեկգրի դրությամբ Population number as of the beginning of the year, 2023	253.8 հազ.մարդ/ ths. person
այդ թվում՝ including:	
քաղաքային urban	137.4 հազ.մարդ/ ths. person
գյուղական rural	116.4 հազ.մարդ/ ths. person
Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2022թ.,% Share of marz population in the total population of the Republic of Armenia 2022, %	8.5
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2022թ.,% Share of urban population size 2022, %	54.1
Գյուղատնտեսական նշանակության հողեր Agricultural land	153 856.0 հա/ ha
այդ թվում՝ վարելահողեր including: arable land	36 771.2 հա/ ha

Համաձայն Կոտայքի մարզպետարանի Էլեկտրոնային կայքի՝ մարզում բնակչությունը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 253856 մարդ, որը կազմում է հանրապետության բնակչության թվաքանակի 8,5%-ը: Ազգաբնակչությունը հիմնականում հայեր են՝ 97,6%: Ազգային փոքրամասնություններից ապրում են՝ եզդիներ, ասորիներ, ռուսներ, քրդեր:

Մարզը հարուստ է օգտակար հանածոների՝ ոսկու, պղինձի, մոլիբդենի, այլումինի, երկաթի, պերլիտի, մարմարի, գրանիտի, լիթոիդային պեմզայի, նեֆելինային սիենիտների, անդեզիտի, հրաբխային խարամների, պեռլիտների, մարմարի, տրավերտինի, բազալտի, քարաղի, զանազան շինարարական նյութերի և հանքային ջրերի 3 խոշոր հանքավայրերով (Հանքավան, Բջնի, Արզնի):

Մարզը զարգացած է սննդամթերքի, մետաղական և ոչ մետաղական հանքարդյունաբերության, ցեմենտի արտադրության, Էլեկտրաէներգիայի արտադրության ուղղությամբ:

Գյուղատնտեսության ոլորտը մարզի տնտեսության մեջ առաջնային տեղ է զբաղեցնում: Գյուղատնտեսության տեսակետից մարզը բնութագրվում է որպես կաթնասնամսապահական, հացահատիկային ոլորտ: Գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների միջոցով: Մարզի գյուղատնտեսության ոլորտի հիմնական ուղղություններն են՝ թռչնաբուհությունը, բուսաբուծությունը և անասնապահությունը: Մարզում գործում է 18 սպանդանոց:

Հրազդանի տարածաշրջանում գործում են Աթարբեկյանի և Գյումուշի հիդրոէլեկտրակայանները:

2022թ.-ին մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- > արդյունաբերություն 11.2 %,
- > գյուղատնտեսություն 8.5 %,
- > շինարարություն 12.8 %,
- > մանրածախ առևտուր 4.8 %,
- > ծառայություններ 3.1 %:

Շնորհիվ իր առողջարանային կենտրոնների զարգացած է զբոսաշրջությունը: Էկոտուրիզմի զարգացումը նպաստում է մարզի համայնքների բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը: Կոտայքի մարզի առկա բնապահպանական խնդիրներն ընդգրկում են հիմնականում ջրօգտագործման, ընդերքօգտագործման, անտառտնտեսվարման ոլորտները:

Մարզկենտրոնը Զրազդան քաղաքն է, որը գտնվում է ծովի մակերևույթից 1600-1750մ բարձրությունների վրա:

Զրազդան համայնքը նախկինում եղել է արդյունաբերական զարգացած կենտրոն՝ Էներգետիկայի, ցեմենտի, վերամշակող ռադիոէլեկտրոնային սարքերի, հագուստի, կաթնամթերքի, հացամթերքի արտադրությունների ուղղությամբ: Այժմ Զրազդանի տարածաշրջանում գործում են ավելի քան 20 ձեռնարկություններ, որոնցից խոշորներն են՝ «Զրազդան ՋԷԿ»-ը, «Գյումուշ ԶԷԿ», «Ցեմենտի գործարան»-ը, «Զրազդանի ՋԷԿ-ի» 5-րդ բլոկը և այլն:

Զրազդան համայնքում ընդգրկվել են հետևյալ բնակավայրերը՝ Լեռնանիստ, Ջրառատ, Սուլակ, Բաղսի: Զրազդանի տարածաշրջանում են գտնվում նախկին արդյունաբերական քաղաքներ՝ Զրազդանը, Չարենցավանը, հանգստյան ու առողջարանային քաղաք՝ Ճաղկածորը: Գյուղական համայնքներն են՝ Ալափարս, Աղավնաձոր, Արզական, Արտավազ, Բջնի, Լեռնանիստ, Կարենիս, Հանքավան, Մարմարիկ, Մեղրաձոր, Սուլակ, Ջրառատ, Բաղսի, Ֆանտան:

Տարածաշրջանն ապահովված է հաղորդակցության ուղիներով՝ Երևան-Սևան-Իջևան-սահման ավտոմոբիլային ճանապարհը, Երևան-Սևան-Վարդենիս-Սոթք երկաթգիծը

Զրազդան քաղաքը գտնվում է Զրազդան գետի վերին հոսանքի ձախ ափին՝ Երևանից 45-50կմ հեռավորության վրա: Հայտնի է որպես արդյունաբերական կենտրոն: Այստեղ է գտնվում Զրազդանի ՋԷԿ-ը, որը հզորագույնն է Հայաստանի հանրապետությանում: Արդյունաբերության մյուս ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (մասնավորապես՝ ցեմենտի արտադրություն): Մարզկենտրոնից մայրաքաղաք հեռավորությունը 45 -50 կմ է:

Զրազդանի տարածաշրջանն ապահովված է երկաթի, ոսկի-բազմամետաղային (Մեղրաձորի), Նեֆելինային սիենիտների(Թեժ սար), այլ շինարարական քարերի հանքավայրերով:

Համաձայն վիճակագրական կայք Էջի՝ Զրազդանի բնակչությունը 2023թ. տարեսկզբին կազմում է 40.1 հազ. բնակիչ:

Համայնքում աշխատատեղերի բացակայության պատճառով գործազրկության մակարդակը բարձր է: Գործազուրկների հիմնական մասը կանայք են, տղամարդկանց

աշխատունակ մասը գնում է արտագնա աշխատանքի:

Հրազդան համայնքն ապահովված է ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերով, որոնց հիմնական մասը գտնվում է անմխիթար վիճակում: Համայնքը հիմնականում գազիֆիկացված է(99%):

Համայնքում կոշտ կենցաղային թափոնների կառավարումը կատարվում է «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրով»: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր՝ Հրազդան համայնքում գտնվող տարածաշրջանային աղբավայր:

Համայնքում առկա են դպրոցներ, նախակրթարաններ, երաժշտական, կերպարվեստի դպրոցներ, մարզադպրոցներ, գրադարաններ, կինոթատրոն, կուլտուրայի տուն, հիվանդանոց, առևտրի և սպասարկման հիմնարկներ, գործում է կաթի, հացի գործարաններ: Համայնքն ունի զբոսայգի, հանգստի գոտիներ:

6. Նախատեսվող գործունեության բնութագիրը, արտադրական հզորություններ, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները (շինարարության, շահագործման, փակման փուլերում)

6.1 Շինարարության փուլ.

Կառուցապատման նպատակով կատարվելու են շինարարական աշխատանքներ: Տարածքում արդեն կատարվել են նախապատրաստական աշխատանքներ:, Զանդման աշխատանքեր. քանդվելու են կցակառույցներ, արգելափակոց, պարիսպներ:

Կատարվելու է երկաթբետոնի ծածկի քանդում-102,0մ² մակերեսով

Պատերի և պարիսպների քանդում-2552մ² մակերեսով

Հիմքերի քանդում- 1225,0մ²

Շինարարության փուլում նախատեսվում է հետևյալ շինարարական աշխատանքները.

- շինարարական հրապարակի կազմակերպում,
- Համապատասխան ծառայությունների հետ համաձայնեցում՝ շինարարության համար աշխատող տրանսպորտային միջոցների և շրջական շենքերին մոտենալու հնարավորությունները:
- Շինհրապարակի տարածքում առկա ստորգետնյա ինժեներական հաղորդակցուղիների՝ էլեկտրական և կապի մալուխների, ջրատարների, գազատարների և այլնի բացման համար՝ դրանք շահագործող կազմակերպություններից թույլտվության ստացում:
- Հողային, հիմնային աշխատանքներ,
- ինժեներական կոմունիկացիաների կազմակերպում,
- հարդարման, բարեկարգման աշխատանքների իրականացում և այլն:

6.2 Շինարարական հրապարակ. Զրեակատարողականի հիմնարկի
շինարարական աշխատանքների իրականացման համար նախատեսվող
շինարարական հրապարակ է ամբողջ տարածքը:

Շինարարական հրապարակում լինելու են.

- աշխղեկի սենյակ 1 հատ
- հանդերձարան 1 հատ
- սննդի ընդունման սենյակ
- կյուլթերի պահեստ 18մ²
- բետոնի ընդունման բունկեր
- Սեպտիկ հոր
- աղբի տարա
- լուսարձակներ
- հակահրդեհային վահանակ/հիդրանտ
- մեքենաների անիվների լվացման հարթակ՝ 1 հատ 8,0x3,5 մ չափերի:

Շինհրապարակում նախատեսված է շինարարական աղբի պահման տարածքը:

Շինհրապարակի կազմակերպման հատակագիծը Գծապակեր 1

Շինարարության ժամանակ նախատեսվող ժամանակավոր պահեստներն, ինչպես նաև աշխատողների համար նախատեսվող ճաշարանը, հանդերձարանը, գրասենյակը, պահակատունը տեղադրվելու են տարածքում՝ ժամանակավոր վագոն տնակներում:

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում 1հատ 8,0x3,5 մ չափերի լվացման սարքի միջոցով: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած, ինչպես նաև շինարարական հոսքաջրերը միավորվելու են մեկ բակային՝ ջրահեռացման ցանցով և լցվելու են սեպտիկ հոր: Անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը պլաստմասսե վերգետնյա խողովակներով, բակային սելավային ջրացանցի միջոցով հեռացվելու են դեպի գոյություն ունեցող համակարգ: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի շինարարական աշխատանքների ժամանակ շին. հրապարակի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինհրապարակը ցանկապատվելու է 4մ բարձրության մետաղական ցանցով/արգելափակոց/: Արգելափակոցի արտաքին մասում տեղադրվելու է տեղեկատվական պաստառ: Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ:

Բոլոր տիպի շին-մոնտաժային աշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինհրապարակն ապահովվելու է էլեկտրականությամբ, պահպանվելու են անվտանգության և հակահրդեհային պայմանները:

Ելնելով առկա պայմաններից շինարարության փուլում նախատեսվում են անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ, հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների հետ:

Յոդային աշխատանքներ. Նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվում է 7580,0մ³ ծավալի հողային աշխատանքներ: Յոդային զանգվածն առաջանալու է շենքի հիմքերի փորման և ամրացման, ժամանակավոր կառույցների տեղադրման, ջրամատակարարման և ջրահեռացման, գազմատակարարման համակարգերի կառուցման համար նախատեսվող աշխատանքներից: Յոդային գրունտը մի մասը՝ 880,0մ³ կպահպանվի տարածքում և կօգտագործվի տարածքի հարթեցման համար, իսկ 6000,0մ³ տեղափոխվելու է 5կմ հեռավորության վայր՝ համայնքի համաձայնությամբ: Նախատեսվում է 700մ³ ծավալով բուսահողի հանում, որից՝ 700մ³ ծավալի բուսահողը օգտագործվելու և փռվելու է տեղում:

Յոդային և հիմնային, տանիքի, հատակների հարդարման, ինչպես նաև լրող և պատող կոնստրուկցիաների շին մոնտաժային աշխատանքները կատարվելու են համաձայն աշխատանքային նախագծի՝ ՇՆուԿ 3.02.02.-87-ի և ՇՆուԿIII-4-81-ի պահանջներին համապատասխան:

Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, շինարարական աշխատանքներ. գործունեության կատարման շինարարության փուլում օգտագործվող հիմնական տեխնիկա-տրանսպորտային միջոցներն են.

- էքսկավատոր -2հատ
- բուլդոզեր-1 հատ
- ինքաթափ-1 հատ
- բարձող մեքենա-1հատ
- շարժական կոմպրեսոր-1 հատ
- ավտոկռունկ-1 հատ
- գազատեղակցման ագրեգատ-1հատ
- էլեկտրական եռակցման սարք -1հատ
- բեռնատար -1հատ
- բետոնամոխիչ
- հետհար մուր
- գլոբն
- ձեռքի էլեկտրական գործիքներ
- ձեռքի մեխանիկական գործիքներ և այլն:

Շինարարական աշխատանքների՝ բեռնման-բեռնաթափման ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին՝ համաձայն ՇՆ և Կ III-4-80* պահանջներին: Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա 5⁰ - ից ոչ ավել թեքություն:

Շինտեխնիկան լինելու է Կապալառու ընկերության սեփական տեխնիկան կամ անհրաժեշտության դեպքում վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Մեքենաներն աշխատելու են ըստ հերթականության և ըստ անհրաժեշտության: Աշխատող մեքենաները կայանվելու են գործունեության տարածքում՝ շինհրապարակում: Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանումը կատարվելու է տարածքի բետոնածածկ հատվածներում:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Կառուցապատման բոլոր լուծումների համար հաշվի են առնվելու տեղանքի պայմանները, կազմակերպվելու է անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր միջոցառումներ՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

Ամբողջ շինարարության ընթացքում վերահսկվելու են շինարարության որակի չափանիշները՝ տեխնիկական վերահսկողությունն իրականացնող մարմնի կողմից: Ակտավորվելու են թաքնված աշխատանքները, գրանցելով վարման մատյանում:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ՝ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների հետ:

Էլեկտրամատակարարում. մասնաշենքերի շինարարության ընթացքում Էլեկտրամատակարարումը կատարվելու է համաձայն՝ «ՀԷՑ» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի, համաձայն որի քրեակատարողական հիմնարկը բաժանորդ է, որի Էլեկտրամատակարարումն իրականացվում է «Գազարին»110/10կՎ ե/կ-ի 10 կՎ օդային գծից: Ամսական ծախսը կազմում է 100,000կՎտ/ժամ, լրացուցիչ հզորության կարիք չկա:

Գազամատակարարում. գազամատակարարումը կատարվելու է «Գազպրոմ»ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի, որի համաձայն մասնաշենքի գազի սպառման ծախսը կազմվելու է 15մ³:

Ջրամատակարարում, ջրահեռացում. «Սևան» քրեակատարողական հիմնարկի ջրամատակարարումն իրականացվելու է Սևան-Յրագոյան d=500մմ պողպատե ջրատարից, միացումն իրականացված է d=100մմ դեպոլիէթիլենային խողովակով:Ջրածախսը կազմում է 1,5լ/վ, իս նոր մասնաշենքի ջրապահանջը կազմվելու է 3,74լ/վ, որն ապահովվելու համար կապահանջվի d=63մմ պոլիէթիլենային խողովակի տրամագծի մեծացում: Հավելված 4

Հրդեհաշիջման համակարգ. շին. հրապարակը կազմակերպելիս կավարվելու են «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին»-ի կողմից տրված հրահանգներով:

Շինարարական հրապարակում տեղադրվելու է հրդեհաշիջման վահանակ՝ դարպասի մոտ՝ հակահրդեհային կրակմարիչներով և հիդրատներով: Շինարարության փուլում տեղադրվելու է նաև ջրի բաք՝ հրդեհամարման, ջրցանի նպատակով:

Աղբահեռացում. շինարարության ընթացքում առաջանալու են շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով՝ մոտ 250մ³ ծավալով: Շինաղբի

կուտակումը կատարվելու է շինհրապարակում նախատեսված վայրում՝ պարկերի մեջ, չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը:

Կենցաղային աղբը կառուցապատման փուլում կազմվելու է 4440կգ/տարի:

Կենցաղային աղբի կուտակման համար տեղադրվելու են 1.5*2 չափերի 1 աղբարկղ:

Շինարարության փուլում աղբահեռացումը կարգավորվելու է Հրագրանի համայնքապետարանի կողմից նախապես համաձայնեցված, որը կտրվի շինթույլտվության ստացման փուլում:

Բարեկարգում, Կանաչապատում. շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կառուցապատումից ազատ տարածքի բարեկարգում՝ եզրաքարերի տեղադրում՝ 150-300մմ, մանրահատիկ ասֆալտ-բետոնապատում՝ 60մմ հաստության բետոնի շերտով, թեքահարթակի կառուցում:

Կանաչապատում. կատարվելու է տարածքի կառուցապատումից ազատ հատվածների 259,6մ² մակերեսով սիզամարգերի տեսքով:

6.3 Ժամանակացույց

Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմվելու է 33 ամիս՝ 990 օր:

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85* մաս II հիման վրա, հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը:

7. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր

Քրեակատարողականի հիմնարկի շինարարության փուլում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր, իսկ շահագործման փուլում ջուր՝ խմելու-կենցաղային նպատակով և բնական գազ:

7.1 Ջուր. շինարարության փուլում ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, տնտեսա-կենցաղային կարիքների, տարածքի ջրցանի, հողի(գրունտի) խոնավացման և անհրաժեշտության դեպքում հողեհաշիջման համար: Շինարարության փուլում աշխատողների համար խմելու ջուրը ապահովվելու է տարածքում առկա ջրամատակարարման համակարգից: Ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով, համապատասխան լիցենզիա ունեցող անձանց կամ ընկերությունների կողմից: Ջուրը լցվելու են տարածքում տեղադրվող 5տ տարողության բաքի մեջ: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հողեհամարման, ջրցանի և անիվների լվացման համար: Ջրցանն իրականացվելու է 150մ² մակերեսով:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{խ.տ}} = (n \times N + n1 \times N1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 4 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n1– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 33 մարդ

N1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 990օր:

$$W_{\text{խ.տ.}} = (4 \times 0.016 + 33 \times 0.025) \times 990 = 880,11 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0,889 \text{ մ}^3/\text{օր:}$$

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U1 = S1 \times K1 \times T, \text{ որտեղ՝}$$

S1 – ջրվող տարածքի մակերեսը 840 մ², (շինհրապարակ, ճանապարհներ)

K1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 450 (առավելագույնը 450օր, ներառված կրկնակի ջրցանը)

$$U1 = 840 \times 0.0015 \times 450 = 567 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 1,26 \text{ մ}^3/\text{օր:}$$

Ընդամենը ջրի սպառումը շինարարության փուլում կլինի 1672,77մ³/շին. ժամ կամ 2,449 մ³/օր:

Անիվների լվացման համար Շինարարության փուլում մեքենաների լվացումը նախատեսվում է օրը 2-3 հատ՝ 1 անգամ հաճախականությամբ:

Տեղադրվելու են 1 հատ լվացման կետ, յուրաքանչյուրի ջրաքանակի նորման ընդունված է 0,8լ/վրկ:

$$Q_2 = 0.8 \times 3 = 2.4 \text{ րկ}$$

Կեղտաջրեր. շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տեղադրվող սանհանգույցներից՝ բիոզուգարանից:

Նյութեր. շինարարության ժամանակ օգտագործվելու է B25 դասի ծանր բետոն՝ 2500կգ/մ³ ծավալային կշռով: Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, մասնավորապես.

- երկաթբետոն, երկաթբետոնե կարկասներ
- ավազ
- բազալտ,
- ֆիբրոցեմենտ
- ամրանային ձողեր
- բետոն
- ամրանային ցանց
- բարձրորակ սվաղ և ներկ և այլն:

Կառույցի երեսապատումը նախատեսվում է իրականացնել բազալտե՝ քարե սրբատաշ սալիկներով, ֆիբրոցեմենտային սալիկներով :

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախնուրդի պատրաստում չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով: Միաձույլ ե/բ կոնստրուկցիաների բետոնալցման համար համապատասխան դասի բետոնը պատվիրվելու է մասնագիտացված բետոնային հանգույցներում: Բետոնը շինհրապարակում լցվելու է կաղապարների մեջ բետոնամղիչով:

Շինաշխատանքերը կատարվելու են մասնագիտացված կապալառու կազմակերպությունների կողմից: Շինարարության համար նախատեսված բոլոր նյութերն, ինչպես նաև շենքի արտաքին և ներքին հարդարման նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված (լիցենզավորված) կազմակերպություններից՝ շինինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր շինարարական կազմակերպության արտադրական բազայից:

Ձմռանը ներքին հարդարման և բետոնային աշխատանքները կատարվելու են հատուկ տաքացման պայմաններում:

Շին. հրապարակում շինանյութերը պահեստավորվելու են պահեստներում, իսկ բաց տարածքի դեպքում կտեղադրվեն տակդիրների վրա՝ չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը: Սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ:

Մասանշենքն ապահովված է լինելու ձայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով՝ ծխի և ջերմային ազդանշանային ընդունող-հսկիչ սարքերով, լուսաձայնային-ազդանշանային ազդասարքերով:

7.2 Շահագործման փուլ.

Նախատեսվում է ՀՀ ԱՆ «Սևան» քրեակատարողական հիմնարկի տարածքում կառուցել հսկիչ անցագրային հանգույց և քրեակատարողական նոր կառույց: **Մասնաշենքի տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ են.**

1. Հողամասի ընդհանուր մակերեսը՝ 27877.9 մ²(100%):
2. Կառույցի ընդհանուր մակերեսը՝ 9636.7 մ²
2. Կառուցապատման մակերեսը հողի վրա՝ 2870.2 մ²(11%):
3. Անջրանցիկ մակերես՝ 5980.2 մ²(22%):
4. Կանաչապատման մակերեսը 1298.0 մ²
5. Բանտախուց- 108 հատ

Ավտոկայանատեղի չի նախատեսվում, օգտագործվելու է գոյություն ունեցող

ավտոկայանտեղին:

Շահագործման փուլում հակահրդեհային ելքը կազմում է 2*2,5/վրկ:

Քրեակատարողական նոր կառույցը իրենից ներկայացնում է ուղղահայաց տեղադրված երկու մասնաշենքից որը հատակագծում ունի „T,, տառի տեսք, որոնք բաժանված են նստվածքային կարանով: Առաջին մասնաշենքը իրենից ներկայացնում է ուղղանկյուն հատակագծով 13.4 մ x 33.0 մ առանցքային չափսերով կառույց:

Երկրորդ մասնաշենքերն իրենից ներկայացնում է ուղանկյուն հատակագծով 105,35մ*15,0մ առանցքային չափսերով կառույց, որը բաժանված է երեք բլոկի նստվածքային կարարներով:

Մասնաշենքերը նկուղային հարկով են, չորս հարկանի կառույցներ, որոնց չորրորդ հարկը հանդիսանում է զբոսարան՝ մասնակի ծածկով: Նախատեսվում է հինգ կանգառով մեկ վերելակ 1000,0կգ բեռնատարողությամբ, 1400*2200մմ չափսերի, առանց մեքենայական սենյակի, 4 կանգառով 1 վերելակ 1000,0կգ բեռնատարողությամբ՝ 1400*2200մմ չափսերի՝ մեքենայական սենյակով: Նախատեսվում է 1-ին, 2-րդ և 3-րդ հարկերում 108 բանտախուց՝ յուրաքանչյուրը 2 անձի համար, օպերատիվ կառավարման կենտրոն՝ իր ներքին պարույրածև, մետաղական աստիճաններով: Նկուղային հարկում նախատեսվում է 5 պատժախուց, 2-րդ հարկում 5 մեկուսարան: Նախատեսվում է նկուղային հարկի պահստամասին մեքենայի մոտեցում:

- Կառույցի ընդհանուր մակերեսը՝ 9098,5մ²

- Կառուցապատման մակերեսը հողի վրա՝ 2230,6մ²

Նախատեսվում է տեղադրել մետաղյա ճաղավանդակներ, բանտախցերի պատուհաններին 2մմ հաստության մետաղյա թերթ՝ անցքերով: Չբոսաբակի առաստաղային մասը լինելու է կիսով չափ փակ, ե/բ ծածկի սալ՝ ծածկված գուլամվոր ցինկապատ պրոֆիլավոր թիթեղով՝ մետաղական հիմնակմախքի վրա: Իսկ բաց հատվածում՝ հորիզոնական մետաղական ճաղավանդակ: Չբոսաբակի վերին հատվածում նախատեսված է ժամապահի դիտահարթակ:

Պարիսպ. նախատեսվում է տարածքի պարագծով առաջին գծի մետաղական արգելափակոց՝ 4,0մ բարձրությամբ հսկիչ անցագրային պատին կից 5,0մ դեպի ներս ե/բ պարիսպ, երաթբետոնե պարիսպ՝ 6,0մ բարձրությամբ, որից 6,0մ դեպի ներս՝ մետաղական արգելափակոց՝ 4,0մ բարձրությամբ:

Տիպարային հարկ

Նկուղային հարկ. ներառում է պատետ, միջանցք, աստիճանավանդակ, վերելակ, պահասենյակ, խուզարկության սենյակ, հերթապահի, սենյակ, 5 հատ սանհանգույցներ, լոգասենյակ, 4 պատժախուց՝ սանհանգույցով և 1 պատժախուց՝ սակավաշարժ խմբերի համար, օպերատիվ կառավարման կենտրոն: Նախատեսվող նկուղային հարկը ծառայելու է որպես թաքստոց:

1-ին հարկ. միջանցք, աստիճանավանդակներ, վերելակ, պահասենյակ, սանհանգույց՝ նաև սակավաշարժ խմբերի համար, կարանտիկի նախամուտք, միջանցքներ, տարբեր նշանակության սենյակներ, 2 տնտեսական անձնակազմի սենյակ, 4 կարանտիկի խուց՝ սանհանգույցով, 1 կարանտիկի խուց սանհանգույցով՝ սակավաշարժ խմբերի համար, կարճատև տեսակցությունների սենյակներ, սննդի ընդունման և բաշխման աշխատակազմի հանդերձարան՝ սանհանգույցով, սննդի ընդունարան և բաշխման սենյակ:

2-րդ հարկ. միջանցք, աստիճանավանդակներ, վերելակներ՝ 4 կանգառով և 1000,0կգ բեռանտարողությամբ, հերթապահի սենյակ, 4 հատ երկարատև տեսակցության սենյակներ, որոնցից 1-ը մանկասայլակով, 4 հատ խոզարկության սենյակներ, 2 հոգեբանի սենյակ, բուժ կետ, բժշկի, ատամնաբույժի կաբինետ, վիրակապարան, ախտահանման սենյակ, պահեստ, դեղատուն, սանհանգույց/նաև սակավաշարժ խմբերի համար, հիվանդասենյակներ, 1400*2200մմ չափսերի մեքենայական սենյակ և այլ:

3-րդ.հարկ. միջանցքներ, 8 սենյակ, գրադարան, աստիճանավանդակներ, վերելակ, 11 աշխատասենյակ, 2 լվացքի, 4 սոցիալական աշխատանքի, հոգեբանի սենյակներ, սանհանգույց նաև սակավաշարժ խմբերի համար, օպերատիվ կառավարման սենյակ, զբոսաբակ ընդհանուր 34 թվով և այլ:

Արտաքին պատերի ջերմամեկուսացում. -կատարվելու է կախովի ճակատների կառուցում ֆիբրոցեմենտային սալիկներով՝ 8մմ հաստության, ցոկոլի երեսապատում բազալտե սալիկներով՝ 30մմ հաստությամբ, գոլորշամեկուսիչ կյուրթերով: Օգտագործվելու է 100մմ հաստության հանքային բամբակ՝ ջերմամեկուսացման նպատակով:

Տանիքը լինելու է հարթ, գունավոր ցինկապատ թիթեղով՝ պաշտպանիչ ճաղաշարով:

Ջսկիչ-անցագրային կետ, նախատեսվում է կառուցել 19,8*18,0մ առանցքային չափերի կառույց, 1-4 առանցքների միջև 18,0-19,8մ առանցքային չափերի, իսկ 1-3 և Ե-2 առանցքների միջև՝ ուղղանկյուն հատակագծով 4,0*12,0մ անացքային չափերի մեկ հարկանի կառույց, որոնք իրարից բաժանված են նստվածքային կարանով:

1-ին հարկում նախատեսվում է - հերթապահի սենյակ, սանհանգույցներ, միջանցքներ, աշխատակիցների և այցելուների գույքապահոց, զննման սենյակ, աստիճանավանդակներ, պահեստարան, ավտոմեքենաների ստուգման կետ և այլն:

2-րդ հարկ- նախատեսվում է միջանցքներ, տարբեր նշանակության հերթապահի սենյակներ, զինանոց, հեռակառավարման կենտրոն և այլն:

Շինությունների հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպվելու է համաձայն՝ ՀՀՇՆII-8.04.-2005. «Շենքերի և շինությունների հրդեհային ավտոմատիկա» շինարարական նորմերի, «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի» կողմից տրված հրահանգների, ինչպես նաև փոշեհատիկային հրդեհաշիջման մոդուլների տեխնիկական անձնագրերի հիման վրա:

Մասնաշենքերի ջեռուցումը նախատեսված է կաթսայատնից:

Շահագործման փուլում մասնաշենքերն պահոված են լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով, որոնց լուծումները նախատեսվել են քաղաքաշինության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N 253-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Շահագործման փուլում հրդեհաշիջման համար պահանջվող ջրի ելքը

հաշվարկվել է համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմերի:

Նախատեսվում է շենքի յուրաքանչյուր հարկում տեղադրել հիդրանտներ:

Շենքերն ապահովված են լինելու էվակուացիոն ելքերով:

Գազամատակարարում. մասնաշենքերի գազամատակարարումը կատարվելու է համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի գազաֆիկացման և գազամատակարարման պայմանագրի հիման վրա:

Ջերմամատակարարում և օդափոխություն. ՀՀ ԱՆ «ԱԼԱՆ» քրեակատարողական հիմնարկի նոր մասնաշենքի ջերմամատակարարումը նախատեսված է կաթսայատանից: **Կաթսայատան չափերն են** քարտե կրոր պատերով 9,0 x 6,0մ արտաքին չափերով վեց հարկանի քարտե կառույց:

Կաթսայատան կառույցի ցուցանիշները՝

- հիմքը ժպավենաձև՝ B-7.5 դասի խամքարաբետոնից
- պատերը՝ կանոնավոր ձևի տուֆ քար /հաստությունը՝ 400 մմ/
- հատակները՝ խճով տոփանված բնահող, բետոնե 100 մմ/, ց/ավազային հարթեցուցիչ շերտ /հաստությունը՝ 30 մմ/
- Դուռը՝ մետաղական,
- Պատուհանը – մետաղապլաստե, սպիտակ գույնի 60 մմ հաստությամբ
- Ներքի հարդարումը — ց/ավազային սվաղ, ջրողիսպերսիոն ներկով
- Արտաքին հարդարումը — ց/ավազային սվաղ, ճակատային ներկում
- Տանիքը-միաթեք է, ծածկված ենդվիչ տիպի ծածկի սալերով 150մմ

Տաք ջրամատակարարման ներքին ցանցը կատարվելու է պոլիպրոպիլենային խողովակներով:

Ելնելով ջերմային ծախսերից՝ ջեռուցման համար $Q = 510648$ կկալ/ $=593.884$ կվտ տաք ջրամատակարարման համար $Q = 402407$ կկալ/ $=468.0$ կվտ կաթսայատանը նախատեսված են երկու հատ կաթսաներ, յուրաքանչյուրը 600 կվտ ջերմարտադրողականությամբ: Ջեռուցման ծախսը հաշվարկված է 2 շենքերի 11240 մ³ /3747.0 մ²/ ծավալի համար: Ընտրված կաթսաների ջերմարտադրողականությունը թույլ է տալիս ջեռուցելու ավելի մեծ տարածք՝ հետագայում լրացուցիչ շինություններ ավելանալու դեպքում: Տաք ջուր ստանալու համար կաթսայատանը նախատեսված է բոյլեր 800 NTR/NTRR/бойлер косвенного нагрева/ $V = 800$ լ: Ընտրված կաթսաներից ծխագազերի արտանետումը բնական է $\varnothing 377 \times 7$ ծխնելույզի միջոցով: Ծխատարը մինչև ծխնելույզ մեկուսացնել ֆոլգայապատ $\delta = 50$ մմ հանքային բամբակե մատերով:

Կաթսայատանը որպես պահուստային վառելիք ընտրված է նաև հեղուկ վառելիք: Կաթսայատանը նախատեսված է օդափոխության բնական ներածման և արտածման համակարգեր: Վառելիքի այրման համար անհրաժեշտ օդի քանակը վերցվում է անմիջապես կաթսայատան սրահից, իսկ կաթսայատուն օդի մուտքը կատարվում է մուտքի դռան ստորին մասում նախատեսված ճաղաշարի միջոցով, արտածումը՝ $\varnothing 315$ դեֆլեկտորի միջոցով: Ջերմային կորուստները նվազագույնի հասցնելու նպատակով տաք ջրամատակարարման և ջեռուցման բոլոր խողովակները ջերմամեկուսացվում են ֆոլգայապատ $\delta = 50$ մմ հանքային բամբակե մատերով, նախապես ներկելով հակաքայքայիչ լաքով: Կաթսայատան խողովակաշարերը մոնտաժվում են պողպատե էլեկտրաեռակցումային՝ ԳՕՍՏ 10704-97 և սովորական ջրազագագծերի ԳՕՍՏ 3262-82 խողովակներով: Սառը ջրի մուտքագծի վրա տեղադրվում է ջրի մագնիսական բևեռացուցիչ, որը թույլ չի տալիս սարքավորումներում և խողովակաշարերում նստվածքների առաջացում: Սառը ջրի խողովակները ներկվում են երկշերտ յուղաներկով: Բոլոր խողովակները մոնտաժումից հետո ենթարկվում են հիդրավիկ փորձարկման համաձայն ՇՆուԿ 3.05.01-85-ի պահանջների: Խողովակները մոնտաժվում են $i = 0.002$ թեքությամբ:

Օդափոխություն. շենքի օդափոխությունը կատարվելու է բնական օդատարներով, որոնք հորանների միջով բարձրանում են դեպի տանիք:

Ծխահեռացման օդամուղները տեղակայված են տանիքի վրա: Շենքում նախատեսված են ներածման և ծխի արտածման համակարգեր:

Ջրամատակարարում- ջրամատակարարման համակարգերը միանալու են տարածքում գոյություն ունեցող համապատասխան համակարգերին համաձայն՝ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Համաձայն նախագծի ջրամատակարարումը կատարվելու է տարածքից 400մ հեռավորության վրա գտնվող ջրագծից, տեղադրվելու է 1 դիտահոր փականներով, մոնտաժը իրականացվում է Φ90 տրամագծի պոլիէթիլենե խողովակներով, ներքին ցանցի մոնտաժը կատարվելու է Φ70-20 տրամագի պոլիպրոպիլենե խողովակներով: Նկուղում նախատեսված է տեղադրել 18.0մ³ տարողությամբ ջրի բաք, որը մղվելու է ջրի պոմպերով: Արտաքին ջրագծի վրա նախատեսվում է տեղադրել հակահրդեհային հիդրանտ, պահարանի մեջ, իսկ շենքի ներսում ամեն հարկում հակահրդեհային ծորակներ պահարանի մեջ: Հավելված 4

Կենցաղային կոյուղի. շահագործման փուլում կոյուղու ցանցը միացվելու է գոյություն ունեցող նախագծվող կոյուղու դիտահորերին, այնտեղից էլ՝ սեպտիկ հոր: Կոյուղու ցանցը իրականացվում է պոլիէթիլենային de 160-50 խողովակներից ռետինե սեղմիչ օղակներով: Ցանցի ներքին մոնտաժումն իրականացվում է պոլիվինիլքլորիդե խողովակներից, որոնց միջոցով կոյուղահոսքը հեռացվում է նախագծվող կոյուղու դիտահորեր: Հորը կառուցվելու է B7.5բետոնից, հատակը 0,4մ² մակերեսով, հիդրոմեկուսացումը կատարվելու է 6,8մ² մակերեսով, երկաթբետոնե հավաքովի օղակներով, իսկ գտող շերտը լինելու է 12մ² մակերեսով՝ խճաավազային:

Հեղեղատար համակարգ. Շահագործման փուլում անձրևի և հալոցքի ջրերը ներքին ջրհոսի ցանցով՝ 50մ տրամագծի խողովակներով տանիքներից բնական թեքության շնորհիվ հեռացվելու են դեպի գոյություն ունեցող համակարգ:

Աղբահեռացում. Շահագործման փուլում աղբահեռացման նպատակով տեղադրվելու են 2 հատ 1*1,5 չափերի աղբամաններ, ներառյալ տեսակավորման աղբամանները:

8. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները շինարարության, շահագործման և փակման փուլերում: Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը.

Գործունեության իրականացման ենթակա տարածքը գտնվում է Կոտայքի մարզի մարզի Հրազդան համայնքի վարչական տարածքում: Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան հիմնականում շինարարության փուլում՝ հողային աշխատանքների, մեքենաների և շինտեխնիկայի շահագործումից առաջացող ծխազագերի արտանետումների, աղմուկի մակարդակի ավելացման և մեքենաների տեղաշարժի ժամանակ, որոնք կլինեն կարճաժամկետ, մասնակիորեն շահագործման փուլում՝ կաթսայատան աշխատանքի արդյունքում ծխազագերի արտանետումների տեսքով:

Գործունեության իրականացումը լանդշաֆտի ծանրաբեռնվածությունն չի առաջացնի, քանի որ գործունեության ենթակա տարածքը կառուցապատված է:

Շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմվելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք կապված են լինելու օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսների աղտոտման, ինչպես նաև տրանսպորտային միջոցների և սարքավորումների աշխատելու ընթացքում

հողային և ջրային ռեսուրսների մեջ յուղերի հնարավոր ներթափանցման, աղմուկի մակարդակի բարձրացման, թափոնների կառավարման հետ:

8.1 Օդային ավազան. գործունեության իրականացման շինարարության փուլում լինելու են օդային ավազան արտանետումներ՝ տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում ծխազագերի և հողային աշխատանքների (փորման, բեռնման, հարթեցման) ընթացքում, ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով:

Ելակետային տվյալներ

ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքում նախատեսվում է իրականացնել՝ «Սևան» ԶՀԿ-ի տարածքում նոր մասնաշենքերի կառուցում: Նախատեսվող աշխատանքները նախատեսվում է իրականացնել առավելագույնը 990 օրվա ընթացքում:

Կառուցապատման աշխատանքների ընթացքում իրականացվելու են հետևյալ ծավալով հողային աշխատանքներ՝

- Գրունտի հանույթ – 7580 մ³
- Հետ լիցք – 880 մ³
- Տեղափոխում- 6000մ³
- Բուսահողի պեղեստավորում հետագա օգտագործման նպատակով - 700 մ³

Շինարարության ժամանակ օգտագործվելու է նաև ավազ՝ ավազակոպճային խառնուրդ, խիճ, բիտում, ամրակցող նյութեր և այլ շինարարական նյութեր:

Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների ցանկը ներկայացվում է՝ թվով 12 շինմեքենա/շինտեխնիկա.

Աշխատանքների կատարման համար ներկայացվում են հետևյալ տեխնիկական միջոցները՝

- Աշտարակային կռունկ KB - 403 A
- Ավտովերամբարձ կռունկ **ԿС - 65713-1 <<Галичанин>>**, կամ տվյալ տեսակին համարժեք տեխնիկական տվյալներով
- Բեռնատար ավտոբետոնախառնիչ **СВ-69Б**
- Բեռնատար ինքնաթափ **МА3 5550**, կամ համարժեք տեխնիկական տվյալներով
- Շարժական կոմպրեսոր **ЗИФ - 55 В**, կամ համարժեք տեխնիկական տվյալներով
- Էլեռակցման սարք **СТН 500**, կամ համարժեք տեխնիկական տվյալներով
- Բուդոգեր **КОМАТСU D37-EX-22**, կամ համարժեք տեխնիկական տվյալներով
- Էքսկավատոր **Hyundai 170W**, կամ համարժեք տեխնիկական տվյալներով
- Չեռքի էլեկտրական գործիքներ
- Չեռքի մեխանիկական գործիքներ
- Ատաղձագործական գործիքներ
- Ներկարարական գործիքներ

Մթնոլորտ արտանտվող նյութերի հաշվարկ

Շինարարական տեխնիկայի տեղաշարժը գրունտային ճանապարհով ուղեկցվում է փոշու արտանետմամբ, ինչն առաջանում է անվադողերի և

գրունտային մակերեսի շփման արդյունքում, գրունտի, շինակյութերի, շինարարական աղբի տեղափոխման, դատարկման աշխատանքների ժամանակ: Շինհրապարակում անօրգանական փոշու արտանետման առավելագույն սահմանաչափը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Q = \frac{C_1 \times C_2 \times C_3 \times K_5 \times N \times L \times C_7 \times q_1}{3600} + C_4 \times C_5 \times K_5 \times q_1^2 \times S \times n, \text{ գ/վրկ}$$

$$M_{\text{տարի}} = 0.0864 \times M_{\text{վրկ}} \times (365 - (T_{\text{ՇՊ}} + T_{\text{Դ}})), \text{ տ/տարի}$$

Որտեղ,

C₁ – գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի միջին բեռունակությունը

C₂ - գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի տեղաշարժման միջին արագությունը

C₃ - գործակից, որը հաշվի է առնում ճանապարհների վիճակը

K₅ - գործակից, որը հաշվի է առնում կյուբի մակերևույթային շերտի խոնավությունը

N- ամբողջ տրանսպորտի վազքընթացների թիվն է ժամում

L- մի վազքի միջին երկարությունն է

C₇ - գործակից, որը հաշվի է առնում մթնոլորտ արտանետվող փոշու բաժնեմասը

q₁ -1կմ վազքի դեպքում փոշու արտանետումները մթնոլորտ

C₄ - գործակից, որը հաշվի է առնում պլատֆորմի մակերեսի կյուբի պրոֆիլը

C₅ - գործակից, որը հաշվի է առնում կյուբի շրջափչման արագությունը

K₅ - գործակից, որը հաշվի է առնում կյուբի մակերևույթային շերտի խոնավությունը

q₁² - կյուբի փաստացի մակերևույթի միավորից փոշու արտանետումները

S- պլատֆորմայի միջին մակերեսն է ,

n- ավտոմեքենաների թիվն է

T_{ՇՊ} – ձնածածկ օրերի թիվն է

T_Դ – անձրևային օրերի թիվն է

Աղյուսակ 2.

Կատարվող աշխատանքի բնույթը	C ₁	C ₂	C ₃	N	L	C ₇	q ₁	C ₄	C ₅	K ₅	q ₁ ²	S	n	M, տ/տարի	Q, գ/վրկ
Մեքենաների շարժը	1	0.6	0.1	2	0,2	0,01	1025	1,3	1.0	0,01	0,002	15	13	0,037	0.005
Գրունտի հանույթը	1	0.6	0.1	2	0,2	0,01	1025	1,3	1.0	0,01	0,002	7	1	0,0013	0,00018
Պունտի հետիցք	1	0.6	0.1	2	0,2	0,01	1025	1,3	1.0	0,01	0,002	7	1	0,0013	0,00018

Արտանետումների վերջնական տարբերակը ներկայացվում է Աղյուսակ 3-ում

Աղյուսակ 3.

Աշխատանքի բնույթը	M, տ/տարի	Q, գ/վրկ
Մեքենաների շարժը փոշի՝ 70-20% SiO ₂)	0,037	0.005
Գրունտի հանույթը փոշի՝ 70-20% SiO ₂)	0,0013	0,00018
Գրունտի հանույթը փոշի՝ 70-20% SiO ₂)	0,0013	0,00018
Արտանետվող փոշու ընդհանուր քանակը	0,0396	0,00536

Փորման աշխատանքների իրականացման արդյունքում արտանետվելու է

անօրգանական փոշի՝ 20-70% SiO₂ պարունակությամբ: Նախատեսվող գործունեության նախագծային տվյալների համաձայն գրունտի հանույթի համար օգտագործվելու է 1 էքսկավատոր՝ համապատասխանաբար 1մ³ աշխատանքային շերտի տարողությամբ: Ելնելով գործող մեթոդակարգից՝ արտանետվող փոշու ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Q = \frac{P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times P_6 \times B_1 \times G \times 10^6}{3600} \text{ գ/վրկ}$$

P1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է, 0,04

P2 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու անրոզում, 0.02

P3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը, 1.2

P4 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.01

P5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.5

P6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

B1 - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.5

G վերամշակվող գրունտի քանակն ըստ աշխատանքային շերտի տարողության՝ 9տ/ժ

Այսպիսով,

$$0,04 \times 0,02 \times 1,2 \times 0,01 \times 0,5 \times 1 \times 0,5 \times 4,5 \times 10^6$$

$$Q = \frac{\dots}{3600} = 0,003 \text{ գ/վրկ}$$

Մեկանգամյա համախառն արտանետումը (70-20% SiO₂).

$$M = 0,0036 \times 0,003 \times 72 = 0,00078 \text{տ/շինժամ}$$

Բեռնման – բեռնաթափման աշխատանքների իրականացման արդյունքում առաջացող փոշու հաշվարկն իրականացվել է գործող մեթոդակարգի համաձայն: Թափքի բեռնաթափման աշխատանքներն իրականացվում են ուղղահայաց՝ առանց թևքի կիրառման: Բեռնաթափվում է գրունտ, ինչից առաջացող փոշու ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M = \frac{K_1 \times K_2 \times K_3 \times K_4 \times K_5 \times K_7 \times K_8 \times K_9 \times B \times G \times 10^6}{3600} \times (1 - \eta), \text{ գ/վրկ}$$

K1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է,

K2 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու անրոզում,

K3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը,

K4 – գործակից, որը հաշվի է առնում տեղի պայմանները, տեղափոխման և փոշեառաջացման պայմանները,

K5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը,

K7 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը,

K8 – ուղղման գործակից տարբեր նյութերի համար՝ կախված ճանկաշերտի տեսակից

K9 – ավտոինքնաթափի համախառն բեռնաթափման ուղղման գործակից

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը,

G – նյութի վերամշակման գումարային քանակը 1 ժամվա հաշվով, տ/ժ

η - փոշենստեցման արդյունավետության հարաբերակցությունը մեկ միավորի հաշվով

Արտանետվող փոշու տարեկան քանակը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$M_{un} = K_1 \cdot K_2 \cdot K_3 \cdot K_4 \cdot K_5 \cdot K_7 \cdot K_8 \cdot K_9 \cdot B \cdot G_{un}, \text{ տ/տ}$$

ԳճՅՈԺ – վերամշակվող նյութի գումարային ծավալն է շինարարության ողջ ժամանակատվածի համար

Գրունտ

$$M = 0,05 \cdot 0,03 \cdot 1,2 \cdot 1 \cdot 0,5 \cdot 0,2 \cdot 0,21 \cdot 0,2 \cdot 0,5 \cdot 6 \cdot 10^6 / 3600 \cdot 0,15 = 0,000945$$

գ/վրկ

$$M_{un} = 0,05 \cdot 0,03 \cdot 1,2 \cdot 1 \cdot 0,5 \cdot 0,5 \cdot 0,4 \cdot 0,2 \cdot 0,5 \cdot 422 = 0,0076 \text{ տ/տարի}$$

Մթնոլորտ արտանետվող աղտոտող նյութերի բնութագիրը բեռնման –բեռնաթափման աշխատանքներից

Աղյուսակ 4.

Արտանետվող նյութ	Նավելագույն միանվագ, գ/վրկ	Սրեկան արտանետում /տ
Անօրգանական փոշի >70%	0,000945	0,0076
Անօրգանական փոշի 20-70%	0,003	0,0106

Շինարարության ժամանակ աշխատող դիզելային շարժիչով մեքենաներից արտանետվող ընդհանուր գազերի և վնասակար նյութերի հաշվարկն իրականացվել է համաձայն գործող մեթոդակարգի: Հաշվարկի բանաձևը արտանետվող գազերի ընդհանուր ծավալի համար իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$G_4 \cdot q_i \cdot n \cdot 10^3$$

$$M' = \frac{\dots}{3600}$$

$$3600$$

Որտեղ, G_4 – դիզ. վառելիքի ժամային ծախսն է

q_i – i-րդ աղտոտող նյութի սահմանային ցուցիչն է՝ տ/վ

n – շինհրապարակում միաժամանակ աշխատող մեքենաների առավելագույն թիվն է:

Հետևաբար,

$$G_4 \cdot q_i \cdot n \cdot 10^3$$

$$M' = \frac{\dots}{3600} = \frac{0,026 \cdot 0,084 \cdot 3 \cdot 10^3}{3600} = 0,0018 \text{ մ}^3 \text{ գազային արտանետման ծավալն է:}$$

$$3600$$

Դիզելային շարժիչով մեքենաներից արտանետվող վնասակար նյութերի հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$G_i = \sum_{k=1}^k (m_{\text{ՍԹԱ}i} \cdot t_{\text{ՍԹԱ}i} + 1,3 \cdot m_{\text{ՍԹԱ}ik} \cdot t_{\text{ՍԹԱ}ik}) \cdot N_k / 1800, \text{ ր/ց}$$

ԳճՅՈԺ – i-րդ նյութի սահմանային արտանետումն է չճանրաբեռնված մեքենայի շարժման ժամանակ գ/ր

$1,3 \cdot m_{\text{ՍԹԱ}ik}$ - i-րդ նյութի սահմանային արտանետումն է ճանրաբեռնված մեքենայի շարժման ժամանակ գ/ր

$t_{\text{ՅԱ}}$ – մեքենային շարժման ժամանակահատվածն է 30ր. կտրվածքով՝
 չճանրաբեռնված ր.

$t_{\text{ՅԱԿ}}$ – մեքենային շարժման ժամանակահատվածն է 30ր. կտրվածքով՝

Աղտոտող նյութի անվանումը	i-րդ նյութի արտանետման ծավալը միաժամանակ աշխատող առավելագույն թվով մեքենաներից յուրաքանչյուրի համար հաշվարկվում է համաձայն
--------------------------	--

ճանրաբեռնված ր.

N_k – k-րդ խմբի մեքենաների վ միաժամանակ աշխատող մեքենաների
 առավելագույն թիվն է

i-րդ նյութի համախառն արտահանման հաշվարկն իրականացվում է
 հետևյալ բանաձևով.

$$M_i = \sum_{k=1}^k (m_{\text{ՍԹԱ}i} \cdot t_{\text{ՅԱ}} + 1,3 \cdot m_{\text{ՍԹԱ}ik} \cdot t_{\text{ՅԱ}k}) \cdot 10^{-6}, \text{ տ/տարի}$$

	$G_i = \sum_{k=1}^k (m_{\text{սթս}} \cdot t_{\text{սթս}} + 1,3 \cdot m_{\text{սթս}k} \cdot t_{\text{սթս}k}) \cdot N_k / 1800,$ <p>բանաձևի, իսկ ընդհանուր գ/վրկ</p>
Ածխածնի օքսիդ	0,00362
Ածխաջրածիններ	0,003214
Ազոտի օքսիդներ	0,00409
Ծծմբի երկօքսիդ	0,00204
Մուր	0,00278

Աղյուսակ 5.

Դիզելային շարժիչներից արտանետվող կյուբի ընդհանուր ծավալը ըստ յուրաքանրյուր աղտոտող կյուբի և ըստ աշխատող մեքենայի

Ամրակցման աշխատանքների ժամանակ օգտագործվող կյուբերի և ներկայկյուբերի համար հաշվարկն իրականացվում է համաձայն հետևյալ բանաձևի.

$$\Pi = 10^{-3} \cdot m_k \cdot (\delta a / 100) \cdot (1 - f_p / 100) \cdot K, \text{ տ/տարի}$$

Որտեղ,

m_k – օգտագործվող ներկայկյուբի քանակն է, կգ

δa – ներկի բաժնեմասն է, որը կորում է աերոզոլի տեսքով, %;

f_p -լուծիչ, %;

K – աերոզոլի տեսքով ներկայկյուբի նստեցման գործակիցն է,

$$\Pi_1 = 10^{-3} \cdot m_k \cdot f_p \cdot \delta p / 10^4, \text{ տ/տարի}$$

Որտեղ,

f_p - կյուբի օքսիդացման չափաբաժինն է

δp – լուծիչի գոլորշիացման մասնաբաժինն է, որն առաջանում չորանալուց:

Հետևաբար ամրակցման աշխատանքների ժամանակ արտանետվող կյուբերի քանակն ըստ տեսակի որոշվում է հետևյալ բանաձևով.

$$G = \frac{\Pi \cdot 10^6}{n \cdot t \cdot 3600}, \text{ գ/վրկ}$$

որտեղ,

Π - ամրակցման ընթացքում օգտագործվող կյուբերի բաժնեմասն է, մեկ ամիս անընդմեջ աշխատելու պարագայում

n – մեկ ամսվա կտրվածքով օգտագործվող կյուբերով աշխատելու անընդմեջ օրերի քանակն է

t – օրվա մեջ ներկայկյուբ օգտագործելու միջին ժամային քանակն է:

Այսպիսով,

$$\Pi = 10^{-3} \cdot 20,05 \cdot (30/100) \cdot (1-45/100) \cdot 1 = 0,003308 \text{ տ/տարի}$$

$$G = 0,003308 \cdot 10^6 / (10 \cdot 6 \cdot 3600) = 0,015316 \text{ գ/վրկ}$$

$$\Pi = 0,003308 \cdot 1 = 0,003308 \text{ տ/տարի}$$

$$G = 0,015316 \cdot 1 = 0,0015316 \text{ գ/վրկ}$$

$$\Pi = 10^{-3} \cdot 20,05 \cdot (45 \cdot 25 / 10^4) = 0,002256 \text{ տ/տարի}$$

$$\Pi_1 = 10^{-3} \cdot 20,05 \cdot (45 \cdot 75 / 10^4) = 0,006767 \text{ տ/տարի}$$

$$\Pi = 0,002256 + 0,006767 = 0,009023 \text{ տ/տարի}$$

$$\Gamma = 0,009023 \cdot 0,5 = 0,004511 \text{ տ/տարի}$$

$$G = 0,002256 \cdot 0,5 = 0,001128$$

Այսպիսով, արտանետվող նյութերի տեսակային և քանակական տվյալները ներկայացվում են Աղյուսակ 7-ում

Աղյուսակ 7.

Աղտոտող անվանումը	Նյութի հավելագույն գ/վրկ	արտանետում	արեկան արտանետում տ/տ
Դիմեթիլբենզոլ	0,001128		0,004511
Կախյալ մասնիկներ	0,0015316		0,002256

Իրականացնելով շինարարության ժամանակ աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետման ծավալների հաշվարկները, ներկայացնենք Աղյուսակ 8-ի տեսքով դրանց ամբողջական վերլուծությունը և նկարագիրը

Շինարարական շխատանքների փուլերը	Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը, գ/վրկ	սմանակահատված)							
	Անօրգանական փոշի 70-20% SiO ₂	Անօրգանական փոշի > 70 SiO ₂	Ածխածնի օքսիդ	Ածխաջրածիններ (CH)	Ազոտի օքսիդներ	Ծծմբի երկօքսիդ	Մուր	հմեթիլբենզոլ	սխյալ մասնիկներ
հնտեխնիկայի տեղեշարժ՝ այդ թվում նաև շինադրի տեղափոխում	0396								
դրման աշխատանքներ	003								
բռնման – բեռնաթափման՝ այդ թվում շենքի վերակառուցման աշխատանքներ		000945							
ոգելային շարժիչից առաջացող արտանետումներ			0,00362	0,003214	0,00409	0,00204	0,00278		
Մրակցման աշխատանքներից արտանետումներ								001128	0015316

Աղյուսակ 8.

Կառուցապատման ժամանակ արտանետվող նյութերը գտնվում են թույլատրելի սահմանային նորերում, իսկ շինարարությունը կրելու է ժամանակավոր բնույթ, ուստի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա նույնպես:

Շինարարության փուլում օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է կարճաժամկետ և թույլատրելի նորմայի սահմաններում: Շինարարության ընթացքում, հատկապես չոր և շոգ եղանակներին, կատարվելու են շինհրապարակի և օգտագործվող ճանապարհի փոշենստեցման աշխատանքներ՝ ջրցան մեքենայով: Շինարարության փուլում հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում Կապալառուի կողմից կիրականացվի օդի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն տարածքի գոյություն ունեցող ելակետային տվյալների հետ՝ բողոքներին արձագանքելու և օդային ավազան վնասակար նյութերի արտանետումները կանխելու նպատակով:

8.2 Հողային ռեսուրսներ.

Գործունեության տարածքը կառուցապատված է՝ հարթ է:

Համաձայն «Հայր և որդի Տիտիզյաններ» ՍՊԸ կողմից տրված ինժեներատեխնիկական ուսումնասիրությունների՝ տարածքում առկա է հողաբուսական շերտ՝ ավազակավի պարունակությամբ: Նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվում է 7580,0մ³ ծավալի հողային աշխատանքներ: Հողային զանգվածն առաջանալու է շենքի հիմքերի փորման և ամրացման, ժամանակավոր կառույցների տեղադրման, ջրամատակարարման և ջրահեռացման, գազմատակարարման համակարգերի կառուցման համար նախատեսվող աշխատանքներից: Հողային գրունտը մի մասը՝ 80,0մ³ կպահպանվի տարածքում և կօգտագործվի տարածքի հարթեցման համար, իսկ 5800,0մ³ տեղափոխվելու է 5կմ հեռավորության վայր՝ համայնքի համաձայնությամբ: Նախատեսվում է 1700մ³ ծավալով բուսահողի հանում, որն օգտագործվելու և փռվելու է տեղում:

8.3 Ջրային ռեսուրսներ. համաձայն ուսումնասիրությունների նախատեսվող գործունեության տարածքում գրունտային ջրերը գտնվում են տեղամասերը ըստ 15մ-ից ավելի խորը հորիզոններում:

Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Ամենամոտ ջրային ռեսուրսը Հրազդան գետն է, որը գտնվում է 4,65կմ հեռավորության վրա: Ուստի մակերևութային և գրունտային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները ջրային ռեսուրսներ:

Նկար 6.

Կենցաղային կոյուղի. շահագործման փուլում կոյուղու ցանցը միացվելու է գոյություն ունեցող նախագծվող կոյուղու դիտահորրե, այնտեղից էլ՝ սեպտիկ հոր: Կոյուղու ցանցը իրականացվում է պոլիէթիլենային de 160-50 խողովակներից ռետինե սեղմիչ օղակներով: Ցանցի ներքին մոնտաժումն իրականացվում է պոլիվինիլքլորիդե խողովակներից, որոնց միջոցով կոյուղահոսքը հեռացվում է նախագծվող կոյուղու

դիտահորեր: Հորը կառուցվելու է B7.5բետոնից, հատակը 0,4մ² մակերեսով, հիդրոմեկուսացումը կատարվելու է 6,8մ² մակերեսով, երկաթբետոնե հավաքովի օղակներով, իսկ գտող շերտը լինելու է 12մ² մակերեսով՝ խճաավազային:

8.4 Կենսաբազմազանություն. Գործունեության ենթակա տարածքը գտնվում է խիտ կառուցապատման գոտում:

Բուսական աշխարհ: Տարածքն արդեն ենթարկված է անտրոպոգեն ազդեցությունների, տարածքը կառուցապատված է, վայրի բուսականությունը բացակայում է:

Կենդանական աշխարհ. գործունեության ենթակա տարածքն արդեն ենթարկվել է մարդկային գործունեության ազդեցությանը: Կառուցապատումը կատարվելու է արդեն առանձնացված և կառուցապատված տարածքում, ուստի կենդանական աշխարհի վրա ազդեցություն չկա:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է կառուցապատված տարածքում, կենսաբազմազանությունը վտանգ չի սպառնում և բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:

8.5 Թափոններ.

Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ.

- քանդման արդյունքում առաջանալու է 3879մ³ ծավալով շինադր՝ բետոնյա մնացորդների տեքով:
- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած խոշոր եզրաչափերի ադր/շինարարական ադրի տեքով (ավազի, բետոնի, քարի և այլն), (ծածկագիր՝ 91200500 01 00 5)՝ 250մ³ ծավալով,
- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված ադր /բացառությամբ խոշոր եզրաչափերի) (ծածկագիր՝ 91200400 01 00 4) կառուցապատման փուլում՝ 4440կգ/տարի, շահագործման փուլում՝ 94 320կգ/տարի:
- Փորման արդյունքում հանված խոշոր քարաբեկորներով վտանգավոր թափոններով չաղտոտված հողային զանգված(վտանգավորության դաս V դաս, ծածկագիր՝31401100 08 99 5)՝ 5800 մ³ ծավալով,
- Կտորների տեքով սև մետաղներ պարունակող թափոններ՝ (ծածկագիր՝ 3 35131200 01 99 5), օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար տարբեր պարունակության՝ (ծածկագիր՝ 3531030501013), օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված այլումինե հաղորդալար (ծածկագիր՝ 35310105 01 99 5) և այլն:

Որոշ թափոնների քանական ցուցանիշները կգնահատվեն Կապալառուի կողմից՝ փաստացի արդյունքներով:

Այս կարգի թափոնները համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի» N430-Ն և 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում

գոյացող արտադրության /այդ թվում՝ ընդերքօգտագործման/ և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանների գործունեության արդյունքում առաջացող թափոնները պատկանում են վտանգավորության 3-4-րդ դասերին:

Շինարարության փուլում շինարարական աղբը կուտակվելու է համապատասխան անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և տեղափոխվելու է համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ 5 կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր կամ հնարավորության դեպքում հանձնվելու է ճանապարհաշինարարական ընկերություններին:

Շինարարության փուլում կենցաղային աղբը կուտակվելու է 1 հատ 1.5x1.0մ³ մետաղական կամ պլաստմասե աղբահավաք տարողությունների մեջ:

Շինարարական և կենցաղային աղբը պարբերաբար հեռացվելու են մասնագիտական ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Կենցաղային աղբի հաշվարկները

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տ

n – աշխատողների թիվն է

$$M=37*120= 4\ 440\text{կգ/տարի}$$

Շինարարությունը տևելու է 33 ամիս, մոտ 2,5 տարի, հետևաբար

$$M=4440*2,5= 11\ 100\text{կգ/տարի կամ } 11,2\text{կգ/օր (ըստ աշխատանքային օրերի՝ 990 օր)}$$

Շահագործման փուլում կենցաղային աղբի առավելագույն ծավալը հաշվարկվել է հաշվի առնելով քրեակատարողական հիմնարկի առավելագույն ծանրաբեռնվածությունը՝ վարչական աշխատող՝ 46 մարդ, 216 քաղբանտարկյալ: Շահագործման փուլում կենցաղային աղբի ծավալը կկազմի.

$$M=262*360= 94\ 320\text{կգ/տարի կամ } 258\text{կգ/օր:}$$

Շինհրապարակում շինարարական նյութերի մնացորդները(մետաղական մասեր) և վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:

8.6 Աղմուկ և թրթռում.

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒԲՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒԲՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱԴՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒԲՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Համաձայն որի, Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 70 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում:

Գործունեության իրականացման ընթացքում աղմուկի մակարդակը և թրթռումները չի խանգարելու բնակչությանը, քանի որ գործունեությունն իրականացվելու է պարսպատվածված և մեկուսացված տարածքում:

Իսկ բուն գործունեության տարածքում աղմուկի և թրթռումների մակարդակները կվերահսկվի, աղմուկ առաջացնող շինտեխնիկան կաշխատի ոչ միաժամանակ, բացառելով շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակի գերազանցումը, պահպանելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

8.7 Արտակարգ իրավիճակներ. շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, քամիների, սողանքների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Կառույցների հիմքերի փոստրակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի գնումը և համապատասխան մասնագետի (երկրաբան) եզրակացությունը:

Տեղադրվելու են տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է տեղեկատվություն շենքի նախագծողի, Կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն:

Օդափոխվող և օդամշակման սարքերի տեղադրումն իրականացվելու է ըստ վերջիններիս նշանակության, միկրոկլիմայի պարամետրերի, ըստ շահագործման ռեժիմի, հրդեհային բաժանմունքների և պայթյունահրդեհային վտանգավորության կատեգորիաների:

Հաշվետվությունում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ՝ ուղղված աշինարարության և շահագործման փուլերում արտակարգ իրավիճակների առաջացման կանխարգելմանը:

Նկուղում նախատեսված է տեղադրել 18.0մ³ տարողությամբ ջրի բաք: Արտաքին ջրագծի վրա նախատեսվում է տեղադրել հակահրդեհային հիդրանտ, պահարանի մեջ, իսկ շենքի ներսում ամեն հարկում հակահրդեհային ծորակներ պահարանի մեջ: Հակահրդեհային կարիքներն ապահովելու համար բոլոր շինությունների նկուղային հարկերում տեղադրվելու է մետաղական ջրամբար:

8.8 Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը./Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն./

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Շինարարության ընթացքում տեղադրվելու են տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է տեղեկատվություն շենքի նախագծողի, Կապալառուի և այլ

պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ :

Շինաշխատանքները կատարվելու են պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆԵԿ-3-480* նորմերի: Մարդու առողջության և աշխատանքի անվտանգության պահպանման նպատակով հաշվետվությունում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

8.9 Պատմամշակութային և բնության հուշարձաններ. գործունեության և մոտակա տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ունեցող պատմամշակութային և բնության հուշարձանները: Ուստի հնարավոր ազդեցությունների մեղմման միջոցառումներ չի նախատեսվում:

Միաժամանակ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

8.10 Սոցիալական. գործունեության իրականացումն ունենալու է դրական սոցիալական ազդեցություն, քանի որ նպաստելու է քրեկատարողական հիմնարկում գտնվող բանտարկյալների պայմանների բարելավմանը:

Շինարարության փուլում աշխատելու է 37 մարդ, որից 4 մարդ ճարտարապետատեխնիկական անձնակազմ, 33 բանվոր: Աշխատելու են հերթափոխային գրաֆիկով, 6 օր՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով:

Շահագործման ընթացքում շենքի հնարավոր առավելագույն աշխատողների և բանտարկյալների քանակը կազմելու է 262 մարդ, որից 216 քաղբանտարկյալ, 46՝ աշխատակիցներ:

Շինարարության ընթացքում առաջանալու են տեղաշարժի ժամանակավոր անհարմարություններ, որոնք հնարավոր է կանխարգելել կառավարման պլանով նախատեսված միջոցառումների կատարման միջոցով: Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակում կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտում չի նախատեսվում:

8.11 Բարեկարգում և կանաչապատում. Լանդշաֆտ. նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում (ազդեցության գոտում) լանդշաֆտի վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում, քանի որ գործունեությունն իրականացվելու է կառուցապատված տարածքում:

Կանաչապատում. գործունեության ենթակա ազատ տարածքի վրա նախատեսվում է կատարել որոշակի կանաչապատման աշխատանքներ՝ խոտածածկի՝ սիզամարգի տեսքով:

9. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը/կառավարման պլան/

Հաշվետվությունում նախատեսվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ՝ բնապահպանական կառավարման պլան, որոնց ճիշտ կիրառման արդյունքում գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա կլինեն նվազագույնը:

9.1 Օդային ավազան.

Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում՝ գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան:
- Մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս ել գալու մաքուր վիճակում:
- Գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով:
- Շինհրապարակում սորուն նյութերը պահել ժամանակավոր պահեստներում կամ ժամանակավոր ծածկի տակ կամ ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով:
- Բացառել տարածքում թափոնների բաց այրումը:
- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում:
- Բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:

Նշված միջոցառումների իրականացման արդյունքում օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի նախատեսվում:

9.2 Հողային ռեսուրսներ.

Հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու համար նախատեսվում է.

- բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվում են միջոցներ, որոնք բացառում են դրա որակական հատկանիշների վատթարացումը:
- Նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսը կմաքրվի խոշոր քարերից, թփերից, կոճղերից:
- Հողի բերրի շերտը օգտահանվելու է, հեռացվելու են ապարները, պահեստավորվելու է առանձին: Հետագայում այն օգտագործվելու է տեղում՝ բարեկարգման նպատակով:
- Ջրային և հողմային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկվելու է խոտաբույսերով կամ հողաթմբերը ամրացվելու են, ծածկվելու են անջրթափանց թաղանթով:

- Հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում, առանձնացված վայրում ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով:
- Շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտի մի մասն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով, իսկ մի մասը տեղափոխվելու է համապատասխան վայր՝ համայնքի համաձայնությամբ:
- Շինհրապարակն ապահովված է կլինի արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար:
- Շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա:
- Ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով,
- Շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կկատարվի տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,
- Շինարարական տեխնիկայի տեխնիկական կայանել պետոնապատ հատվածներում:
- Մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում,
- Բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարել մինչև վերջիններիս շինհրապարակից դուրս գալը:

9.3 Ջրային ռեսուրսներ.

Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու նպատակով նախատեսվում է.

- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր:
- Անձրևաջրերը և արտադրական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող պարզարան:
- Ջրցանման համար կօգտագործվի միայն տեխնիկական որակի ջուր և պարզարանում կուտակված ջուրը,
- պարզարանում մեխանիկական նստեցման հետևանքով առաջացած տիղմը՝ որպես շինադբ, ժամանակ առ ժամանակ կտեղափոխվի ադբավայր՝ պայմանագրային հիմունքներով,
- Շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կետերում,
- Շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով:

Կեղտաշրերի հեռացման համար նախատեսվում է.

- շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են շինհրապարակում տեղադրվող սանհանգույցից՝ բիոզուգարանից:

Շահագործման փուլում ջրամատակարարմանն ջրահեռացման համակարգերը միացվելու են գոյություն ունեցող համապատասխան համակարգերին՝ հորին: Հորի մաքրումը կատարվելու է մասնագիտական կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

9.4 Կենսաբազմազանություն.

Բուսական աշխարհ. նախատեսվող գործունեության ենթակա տարածքն արդեն ենթարկված է անտրոպոգեն ազդեցությունների, կից գտնվում են հյուսիս-հարավ ավտոմայրուղին, Ա. Բաբաջանյան փողոցը: Գործունեության ենթակա և հարակից տարածքներում բուսածածկը բացակայում է:

Կենդանական աշխարհ. գործունեության հարակից տարածքներն արդեն կառուցապատված են, ուստի մարդկային գործոնի, երթևեկության՝ մեքենաների շարժի, աղմուկի պայմաններում տարածքում բացակայում են կենդատեսակները, ինչպես նաև կենդանիների բնադրավայրերը, միգրացիոն ուղիները:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Հրազդան քաղաքի Զրեակատարողական հիմնարկի արդեն կառուցապատված տարածքում, որտեղ բացակայում է կենսաբազմազանությանը, ուստի վերջիններիս վրա վտանգ չի սպառնում և բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:

9.5 Թափոններ.

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմվելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը գերծ է պահվելու թափոնների կուտակումներից:
- Շին հրապարակի տարածքում կիստակեցվի շին. աղբի նախնական կուտակման վայրը:
- Շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթելենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր:
- Մետաղական մասերն կառանձնացվեն և որպես մետաղի ջարդոն կհանձնվեն հատուկ մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով:

- Կառուցապատման փուլում կենցաղային աղբը կուտակվելու է պլաստմասե աղբահավաք տարողությունների մեջ:
- Կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:
- Շինաղբի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով կամ բեռնատարները ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով:
- Բացառվելու է աղբի կուտակումը շիրապարակից և կառուցապատվող տարածքից դուրս տարածքներում:
- Շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի մնացորդները, վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:

Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել 9 հատ 1,5x2մ³ տարողության պլաստմասե աղբամաններ:

9.6 Աղմուկ և թրթռում.

Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին:
- Կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում:
- շինարարական աշխատանքներում ներգրավվելու են ժամանակակից՝ աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ:
- Տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործվելու են սարքին վիճակում:
- Պարբերաբար կստուգվեն և կկարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները:
- Բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը շինհրապարակից և կառուցապատման տարածքից դուրս՝ այլ վայրերում:
- Օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:
- Պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թուլյատրելի նորմերը:

Շահագործման փուլում նախատեսվում է.

- օդափոխման և օդի լավորակման համակարգերում աղմուկի խլացուցիչների կիրառում:
- Օգտագործվող ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ, թրթռամարիչ նյութերի օգտագործում՝ առաջնորդվելով համապատասխան մարմինների եզրակացություններով:

9.7 Արտակարգ իրավիճակներ.

Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- Կառույցների հիմքերի փոստրակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան մասնագետի (երկրաբան) կողմից կազմված եզրակացությունը:
- Կտեղադրվեն տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է շենքի նախագծողի, կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն: - շինհրապարակը կկազմակերպվի հակահրդեհային անվտանգության պաշտպանության կանոններին համապատասխան, տեղադրվելու է ջրի բաք՝ հրդեհամարման նպատակով:
- Շինհրապարակն ապահովվելի հակահրդեհային կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով:
- Շինհրապարակն, ինչպես նաև բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունները ժամանակ առ ժամանակ մաքրել հրդեհավտանգ և պայթյունավտանգ թափոններից և աղբից:
- Հակահրդեհային միջտարածությունները չօգտագործել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար:
- Բաց պահել նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները, տեղադրել դրանց մոտեցման համապատասխան ցուցանակներ:
- Տեղադրել ձայնային ազդանշաններ, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար:
- Հեղուկ և վտանգավոր նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- Մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել:
- **Շահագործման փուլ.** Շահագործման փուլում արտակարգ իրավիճակների դեպքում նախատեսվում է.
- մասնաշենքերի ստորգետնյա հարկերը ծառայելու են բանտարկյալների և աշխատակիցների համար ապաստարան արտակարգ իրավիճակներում պաշտպանական նպատակներով:
- Ապահովված է լինելու հակահրդեհային հիդրատներով, օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային՝ հակաձխային, արտածման համակարգերով, Էվակուացիոն ուղիներով և ելքերով, նկուղում տեղադրվելու է ջրի բաք՝ հրդեհամարման նպատակով:
- Պահպանվելու են հակահրդեհային մուտքերը՝ հրշեջ մեքենաների շրջադարձի համար:

9.8 Մարդու առողջություն. Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն.

Շինարարության փուլում աշխատողների առողջության պահպանման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, շինհրապարակում՝ անվտանգության տեխնիկայի կանոնները անցումները, վտանգավոր գոտիները կցանկապատվեն:
- Պահպանել ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները:
- Մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների:
- Ստուգվելու են առասանիչ բանվորների գիտելիքները, տեղադրել առասանման եղանակների և ձևերի նկարագրությամբ ցուցանակներ:
- Աշխատողների համար ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական և պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, կոշիկ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով:
- Ապահովել աշխատողների համար սանիտարական և հանգստի պայմաններով (հանգստի սենյակ, հանդերձարան, լվացարան և այլն)՝ անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն):
- Շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ:
- Վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը:
- Նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով:
- Բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին, երթևեկության արագությունը շինհրապարակում չպետք է գերազանցի 5կմ/ժ:
- Շինհրապարակի լուսավորությունը ապահովել հավասարաչափ՝ լուսավորության 2 լյուքսից ոչ պակաս:
- Շենքի ներսում եռակցման և ներկման աշխատանքները կատարել օդափոխության պայմաններում, հոսանքատար մասերի մեկուսացում:

Շահագործման փուլ.

Շահագործման փուլում շենքն ապահովված է լինելու հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններով՝ ՀՀՇՆ 1/- 11.07.01-2006 շինարարական նորմերին համապատասխան:

Մասնավորապես նախատեսվում է.

- մասնաշենքերն ապահովված է լինելու հաշմանդամների պահանջմունքին հարմարեցվող ունիվերսալ, շարժական տարրերով,
- վերգետնյա և ստորգետնյա անցումներ, թեքահարթակներ,
- տարածքի մուտքը կահավորված է լինելու տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով:

9.9 Էներգահնայողություն և Էներգաարդյունավետություն. Մասնաշենքերի Էներգաարդյունավետության համապատասխանության գնահատման համար պետք է կիրառվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 56-Ն որոշմամբ սահմանված է և (կամ) 21 ընթացակարգերի պահանջները:

Կատարվելու է;

- 8մմ հաստության կախովի ճակատների կառուցում՝ ֆիբրոցեմենտային սալիկներով:
- Ցոկոլի երեսապատում բազալտե սալիկներով՝ 30մմ հաստությամբ գոլորշամեկուսիչ նյութերով :
- Օգտագործվելու է 100մմ հաստության հանքային բամբակ՝ ջերմամեկուսացման նպատակով:

9.10 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

9.11 Սոցիալական.

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները կատարել սահմանված ժամերին՝ ցերեկը:
- Բացառել տարածքից դուրս կենցաղային աղբի և շինաղբի, մեքենաների կուտակումները:

9.12 Լանդշաֆտ.

Նախատեսվող շինությունը լինելու է ժամանակակից լուծումներով և նյութերով

կառույց:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.

- շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են:
- Շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է տարածքը:
- Կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

9.13 Բարեկարգում և Կանաչապատում

Շենքի կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում, տարածքի բարեկարգում:

Կառուցապատման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է նաև գործունեության ենթակա ազատ տարածքի՝ 259,6մ² մակերեսի վրա կատարել կանաչապատման աշխատանքներ՝ սիզամարզերի տեսքով:

Տարածքի կանաչապատման աշխատանքները կատարվելու է սիզամարզերի միջոցով՝ ծառերի և թփերի տնկում չի նախատեսվում:

Բարեկարգման և կանաչապատման նպատակով նախատեսվում է.

- կառուցապատումից ազատ տարածքի հարթեցում և բարեկարգում:

Կանաչապատման նպատակով օգտագործվելու է տարածքի հանվող բուսահողը:

10. Նախատեսվող գործունեության ազդեցության Մոնիթորինգ

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հսկողությունն իրականացնող այլ մարմինների կողմից նախատեսվող կանոնավոր հսկողությունն է: Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգ:

Այդ նպատակով նախատեսվում է.

- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում:
- Բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության, տեխնիկական վերահսկողության իրականացում՝ ամենօրյա ռեժիմով:
- Բոլոր աշխատողների աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին իրազեկում:
- Տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը կամ անձը պարտավոր է ժամանակին Ձեռնարկողին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել նկատած անհամապատասխանությունները:
- Խստիվ պահպանել շինարարության կանոնները և անձնական

պաշտպանության նորմերը, հակահրդեհային պահանջները՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերի համապատասխանության ապահովվում:

- Թափոնների տեղափոխումը կազմակերպում՝ համապատասխան պայմանագրերի հիման վրա:
 - Շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառվելու նպատակով:
 - Արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձի նշանակում, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում:
 - Շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանում:
 - Բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացում:
- Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվելու են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

11.Բողոքների ընթացակարգ

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կներդրվի բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ), որը հիմնականում ուղղված կլինի շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը:

Շինարարական բոլոր տեղամասերում ապահովվելու է կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:

12. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան

№	Գործունեության տարածքում ազդեցության ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչները և ազդող գործոնները	Մեղմող միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացման պատասխանատու	Վերահսկող
	Օդային ավազան	<p>Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> ✓ շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում՝ գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան: ✓ Մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս են գալու մաքուր վիճակում: ✓ Գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով: ✓ Շինհրապարակում սորուն նյութերը պահվել ժամանակավոր պահեստներում կամ ժամանակավոր ծածկի տակ՝ ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով: ✓ Բացառվել տարածքում թափոնների բաց 	Կապալառու	Նախաձեռնող

		<p>այրումը:</p> <ul style="list-style-type: none"> ✓ Օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում: 		
2	Հողային ռեսուրսներ	<p>Գործունեության իրականացման հետևանքով հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> ✓ բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվում են միջոցներ, որոնք բացառում են դրա որակական հատկանիշների վատթարացումը: ✓ Նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսը կմաքրվի խոշոր քարերից, թփերից, կոճղերից: ✓ Հողի բերրի շերտը օգտահանվելու է, հեռացվելու են ապարները, պահեստավորվելու է առանձին: ✓ Ավելցուկային բուսահոցը տեղափոխել փակ ծածկով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համայնքի համաջայնությամբ առանձնացված տեղ: ✓ Ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկվելու է խոտաբույսերով կամ հողաթմբերը ամրացվելու են, ծածկվելու են անջրթափանց թաղանթով: 	Կապալառու	Նախաձեռնող

		<ul style="list-style-type: none"> ✓ Հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում, առանձնացված վայրում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով: ✓ Շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով: ✓ Շինհրապարակն ապահովված է կլինի արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար: ✓ Շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա: ✓ Ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով: ✓ Շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կկատարվի տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում: ✓ Շինարարական տեխնիկայի 		
--	--	--	--	--

		<p>տեխնիկական կայանել պետոնապատ հատվածներում:</p> <ul style="list-style-type: none"> ✓ Մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում: ✓ Բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարել մինչև վերջիններիս շինհրապարակից դուրս գալը: 		
3	Ջրային ռեսուրսներ	<p>Գործունեության իրականացման ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են.</p> <ul style="list-style-type: none"> ✓ փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր: ✓ Ածրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող պարզարան: ✓ Ջրցանման համար օգտագործվելու է միայն տեխնիկական որակի ջուր և պարզարանում կուտակված ջուրը: ✓ Պարզարանում մեխանիկական նստեցման հետևանքով առաջացած տիղմը՝ որպես շինադբ, ժամանակ առ ժամանակ տեղափոխվելու է աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով: ✓ Շինարարության համար անհրաժեշտ 	Կապալառու	Նախաձեռնող

		<p>բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով:</p> <p>✓ Ջրցանման համար օգտագործվելու է միայն տեխնիկական որակի ջուր:</p> <p>Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվելու է.</p> <p>✓ շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող սանհանգույցից՝ բիոզուգարանից: Շահագործման փուլում.</p> <p>✓ ջրամատակարարման համակարգերը միացվելու են տարածքում առկա ջրատարին:</p> <p>✓ Կոմունալ-կենցաղային հոսքաջրերի և կեղտաջրերի հեռացումը կատարվելու է դեպի տարածքում առկա ջրահեռացման ցանց:</p>		
4	Թափոններ	<p>Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <p>✓ շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից:</p> <p>✓ Շին հրապարակի տարածքում հստակեցվելու է շին աղբի նախնական</p>	Կապալառու	Նախաձեռնող

		<p>կուտակման վայրը:</p> <ul style="list-style-type: none"> ✓ Շինարարական թափոնները՝ շինադք, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայրում, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր: ✓ Շինադքի տեղափումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով: ✓ Կենցաղային աղբի և շինադքի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության: ✓ Շինարարության և շահագործման փուլերում կենցաղային աղբը հավաքվելու է տարածքում տեղադրված աղբարկղերի մեջ և հատուկ աղբահավաք ծառայությունների կողմից մեքենաներով տեղափոխվելու է նախատեսված աղբավայր: ✓ Բացառվելու է աղբի կուտակումը շիրապարակից դուրս՝ այլ հասարակական տարածքներում, ✓ Շինարարական նյութերի մնացորդները(մետաղական մասեր) և վտանգավոր նյութերը և թափոնները հավաքվելու են հատուկ 		
--	--	---	--	--

		տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:		
5	Աղմուկ և թրթռում	<p>Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> ✓ շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին: ✓ Կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում: ✓ Շինարարական աշխատանքներում ներգրավվելու են ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ: ✓ Տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործվելու են սարքին վիճակում: ✓ Պարբերաբար ստուգվելու և կարգաբերվելու են տրանսպորտային միջոցների շարժիչները: ✓ Բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ: ✓ Օգտագործվող շին տեխնիկական և մեքենաները պետք է ապահովված 	Կապալառու	Նախաձեռնող

		<p>լինեն համապատասխան իլացուցիչներով:</p> <ul style="list-style-type: none"> ✓ Պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը: <p>Շահագործման փուլում նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> ✓ օդափոխման և օդի լավորակման համակարգերում աղմուկի իլացուցիչների կիրառում: ✓ Օգտագործվող ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ, թրթռամարիչ կյուբերի օգտագործում՝ համապատասխան մարմինների եզրակացությունների հիման վրա: 		
6	Արտակարգ իրավիճակներ	<p>Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> ✓ կառույցների հիմքերի փոսորակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան մասնագետի(երկրաբան) կողմից կազմված եզրակացությունը: ✓ Կտեղադրվեն տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է շենքի նախագծողի, Կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության: շինարարության սկզբի և ավարտի 	Կապալառու	Նախաձեռնող

		<p>վերաբերյալ տեղեկատվություն:</p> <ul style="list-style-type: none"> ✓ Շինհրապարակը կազմակերպվելու է հակահրդեհային անվտանգության պաշտպանության կանոններին համապատասխան: ✓ Շինհրապարակն կապահովվի հակահրդեհային կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով: ✓ Շինհրապարակն, ինչպես նաև բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունները ժամանակ առ ժամանակ մաքրվելու են հրդեհավտանգ և պայթուցավտանգ թափոններից և աղբից: ✓ Բաց են լինելու նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները, տեղադրվելու են դրանց մոտեցման համապատասխան ցուցանակներ: ✓ Տեղադրվելու են ձայնային ազդանշաններ, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար: ✓ Մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել: 		
--	--	---	--	--

		<p>Շահագործման փուլ.</p> <ul style="list-style-type: none"> ✓ Մասնաշենքի ստորգետնյա հարկերը ծառայելու են բնակչության համար ապաստարան արտակարգ իրավիճակներում՝ պաշտպանական նպատակներով: ✓ Ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով, օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային՝ հակածխային, արտածման համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով, նկուղում տեղադրվելու է ջրի բաք՝ հրդեհամարման նպատակով, 		
7	<p>Մարդու առողջություն. Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն</p>	<p>Շինարարության փուլում աշխատողների առողջության պահպանման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> ✓ պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, շինհրապարակում պահպանվելու են անվտանգության տեխնիկայի կանոնները անցումները, վտանգավոր զոնաները ցանկապատվելու են: ✓ Պահպանել ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները: 	<p>Կապալառու</p>	<p>Նախաձեռնող</p>

		<ul style="list-style-type: none"> ✓ Մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: ✓ Ստուգվելու և ատեստավորվելու են առասանիչ բանվորների գիտելիքները, տեղադրվելու են առասանման եղանակների և ձևերի նկարագրությամբ ցուցանակներ: ✓ Ապահովվել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական և պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, կոշիկ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով: ✓ Աշխատողների համար նախատեսել սանիտարական և հանգստի պայմաններ (հանգստի սենյակ, հանդերձարան և այլն), որն ապահովված է լինելու անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն): ✓ Շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց 		
--	--	--	--	--

		<p>մուտքն արգելող նշաններ:</p> <ul style="list-style-type: none"> ✓ Վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը: ✓ Նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով: ✓ Ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով: ✓ Բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին, երթևեկության արագությունը շինհրապարակում չպետք է գերազանցի 5կմ/ժ: ✓ Շինհրապարակի լուսավորությունը պետք է ապահովի հավասարաչափ՝ լուսավորության 2 լյուքսից ոչ պակաս: ✓ Շենքի ներսում եռակցման և ներկման աշխատանքները կատարել օդափոխության պայմաններում, հոսանքատար մասերի մեկուսացում: ✓ Շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացնել 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին 		
--	--	---	--	--

		<p>համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ:</p> <p>Շահագործմանն փուլ շենքն ապահովված է լինելու հաշմանդամների պահանջմունքին հարմարեցվող ունիվերսալ, շարժական տարրերով, վերգետնյա և ստորգետնյա անցումներն ապահովված է լինելու թեքահարթակներով:</p> <p>✓ Մուտքը տարածք կահավորված է լինելու տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով</p>		
8	<p>Էներգաարդյունավետություն և Էներգախնայողություն</p>	<p>Շենքերի ջեռուցման, օդափոխման համակարգերի, ինչպես նաև շենքերը պատող կոնստրուկցիաների Էներգետիկ փորձաքննությունը (աուդիտ) իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 31-ի N 1399-Ն որոշմամբ հաստատված պահանջներին համապատասխան:</p>	Կապալառու	Նախաձեռնող

9	Սոցիալական	<p>Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> ✓ շինարարական աշխատանքները կատարել սահմանված ժամերին՝ ցերեկը: ✓ Բացառել տարածքից դուրս աղբի և մեքենաների կուտակումները: 	Կապալառու	Նախաձեռնող
10	Լանդշաֆտ.	<p>Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.</p> <ul style="list-style-type: none"> ✓ շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են: ✓ Շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է տարածքը: ✓ Կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ: 	Կապալառու	Նախաձեռնող
11	Բարեկարգում և կանաչապատում	<p>Նախատեսվում է գործունեության ենթակա ազատ տարածքում բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:</p>	Կապալառու	Նախաձեռնող

13.Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ

հհ	Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Մոնիթորինգի վայրը	Իրականացման ձևը	Ժամանակամիջոց	Մոնիթորինգ Կատարող/Վերահսկող
----	---------------	-------------------------	-------------------	-----------------	---------------	------------------------------

1	Շինարարության ընթացքում օդային ավազան, ջրային և հողային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի և կեղտաջրերի ներթափանցման բացառելուն ուղղված	<ul style="list-style-type: none"> Փոշու և այլ օդի աղտոտիչների (CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական չափաքանակների պարբերական վերահսկում: Ջրային և հողային ռեսուրսների՝ բուսահողի որակի ուսումնասիրությունների կատարում, 	<p>Գործունեության ենթակա տարածքում</p> <p>Գործունեության տարածքում</p>	<p>Ստուգայցեր, գործիքային ստուգումներ</p> <p>Տեսողական դիտարկումներ, մասնագետի կողմից ստուգայցեր</p>	<p>Շինարարության և փուլում՝ ամենօրյա:</p> <p>Փոշենստեցում ը տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրը 2-3 անգամ</p> <p>Պարբերաբար՝ ոչ ուշ 3 ամիսը մեկ հաճախականությամբ</p>	<p>Կապալառու Նախաձեռնող</p> <p>Համապատասխան վերահսկողական մարմիններ:</p>
2.	Կենսաբազմազան ություն	Բուսականության մոնիթորինգ՝ Կարմիր գրքում գրանցված տեսակների հայտնաբերման համար:	Հարակից տարածքում	Տեսողական դիտարկումներ, մասնագետի կողմից ստուգայցեր:	Գործունեության և սկզբում	Կապալառու
3	Արտակարգ իրավիճակներ և աշխատանքի	Աշխատողների իրազեկում՝ աշխատանքի	Գործունեության իրականացման ենթակա	Իրազեկումներ և ստուգումներ	Պարբերաբար	Կապալառու

<p>անվտանգություն</p>	<p>անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին:</p> <p>Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն:</p> <p>Բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝ հակահրդեհային պահանջների ապահովում՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին համապատասխան:</p>	<p>և տարածքում</p>	<p>Ստուգայցեր</p>	<p>ամենօրյա ռեժիմով,</p>	<p>Նախաձեռնող</p>
<p>Շինարարական նորմերի</p>					

	պահպանում	<ul style="list-style-type: none"> Ամբողջ շինարարության ընթացքում վերահսկվելու են շինարարության որակի չափանիշները : <ul style="list-style-type: none"> Աղմուկի թրթռումների մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ: 	Շինհրապարակ	Ստուգայցեր	Չաճախակի	
	Աղմուկ, թրթռում		Գործունեության իրականացման ենթակա տարածքում	Ստուգայցեր	Ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ	
4	Նյութեր	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից:	Լիցենզավորված կազմակերպությունների պահեստներ	Մատակարարման ընթացքում	Շինարարության փուլում պայմանագրերի առկայություն	Կապալառու Նախաձեռնող
5	Թափոն	Թափոնների կանոնավոր տեղափոխում:	Գործունեության ենթակա տարածքից	համապատասխան պայմանագրերի հիման վրա տեղափոխում	Շինարարության ընթացքում	Կապալառու Նախաձեռնող
6	Շինտեխնիկա և տրանսպորտային միջոցներ	<ul style="list-style-type: none"> Շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում: 	Շինհրապարակ	Ստուգայցեր	Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում	Կապալառու Նախաձեռնող
				Դիտողական		

		<ul style="list-style-type: none"> • Շինարարական տեխնիկայի և տրանսպորտային և միջոցների վառելիքի լիցքավորման և յուղման իրականացում՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում: 	շինհրապարակից դուրս՝	ստուգումներ, Գործընթացի ստուգում՝ մեքենաների շահագործման ընթացքում	Պարբերաբար Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում	
7	Կանաչապատում և բարեկարգում	Բարեկարգել շրջակա տարածքը, - տարածքի կանաչապատման աշխատանքների հսկողություն:	Գործունեության տարածք	Դիտողական ուսումնասիրություն	Շինարարական աշխատանքների ավարտից հետո	Կապալառու Նախաձեռնող

14. Հանրային քննարկումներ

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի և ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի «Հայաստանի հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343 - Ն որոշմամբ սահմանված պահանջների՝ հանրային ծանուցումը և քննարկումները կատարվել են ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքապետարանում, որի վերաբերյալ համայնքը տվել է դրական կարծիք: Քննարկմանը մասնակցել են համայնքի, Նախաձեռնողի ներկայացուցիչները, բնակիչներ: Հանրային քննարկմանը ներկայացվել է նախատեսվող գործունեության նախագծային լուծումները և գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների և մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, դրանց մեղմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումները:

Քննարկման արդյունքում նախագծի վերաբերյալ համայնքը տվել է իր նախնական համաձայնությունը, որն էլ հիմնավորում է նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության համապատասխանությունը համայնքի հեռանկարային զարգացման հիմնադրույթային փաստաթղթերին:

15.ՇՄԱԳ հաշվետվության կազմման իրավական հիմքերը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենք՝ – Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված՝ ՀՕ-121-Ն 1999թ. և լրամշակված՝ ՀՕ-522-Ն 2022թ.)- - կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) - Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.)-Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)-Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (2006)-Սահմանում է Հայաստանի Հանրապետության բնությունն հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.) - Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպա-իրավական ձևերի զարգացման,

հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանում, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանում և այլն:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.): Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք (2001թ.) - կարգավորում է ՀՀ էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները և սահմանում է դրանց կիրառման մեխանիզմները:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998)-կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

«Քաղաքաշինության Բնագավառում Իրավախախտումների Համար պատասխանատվության մասին» ՀՀ Օրենքը (28 ապրիլի 1999 թ.) -Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը՝ քաղաքաշինական

գործունեության բոլոր փուլերում քաղաքացիների, հասարակության ու պետության շահերը պաշտպանելու, օրենսդրական ակտերի, ստանդարտների ու կանոնների պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

«Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ Օրենքը (ՀՕ-376-Ն՝ 2002թ. հունիսի 12):
Կարգավորում է սեյսմիկ անվտանգության ապահովման հետ կապված հարաբերությունները Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև այլ օրենքներով և իրավական ակտերով:

«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքը (2011թ.)- կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղբահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքները և պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը չվճարելու, պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման կարգը աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառներում:

ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի «Հայաստանի հանրապետության կառավարության 2014թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343 - Ն որոշում:

ՀՀ կառավարության 29 հունվարի.2010թ.` «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշում:

ՀՀ կառավարության 8 սեպտեմբերի 2011 թվականի «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1622-Ն որոշումն ուժը կարգրած ճանաչելու և 2001թվականի ապրիլի 12-ի N 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N1396-Ն որոշում:

ՀՀ կառավարության 02.11.2017 թ. N 1404-Ն որոշում՝ «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026- Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008թ. «Հայաստանի հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում:

ՀՀ կառավարության 15 մարտի 2007թ. «ՀՀ Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» N 385-Ն որոշում:

ՀՀ կառավարության 31 հուլիսի 2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N 781-Ն որոշում:

ՀՀ կառավարության 12 ապրիլի 2018թ. «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության

և «Էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-Ն որոշում:

Գրականություն

1. СП.485.13130.2021:
2. «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒԽ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒԽ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒԽ» N2-III-11.3 սանիտարական նորմեր:
3. Արտակարգ իրավիճակների նախարարի 2021թ. մարտի 31-ի 372-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի, սեյսմիկ գոտևորման քարտեզների և Զաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»:
4. ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության

Նախագծման նորմեր»:

5. СНиП IV – 2 – 82 “Сборник. Земляные работы”
6. ՀՀՇՆ 1 – 2.01-99 «Ինժեներական հետազոտություններ շինարարության համար հիմնական դրույթներ»:
7. ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը:
8. ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին ՇՆԵՎԿ III-IV.2008:
9. ՀՀՇՆ I-2.03-03 «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՂԱԲԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՂԱՍՏՐ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ քաղաքաշինության նախարարի 2003թ հունիսի 5-ի. 38- Ն հրաման:
10. Քաղաքաշինության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ:
11. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն Քաղաքաշինության նախարարի հրաման (8 ապրիլի 2014):
12. ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998):
13. ՇՆՈԼԿ 3.01.01-85 (Շինարարության արտադրության կազմակերպում), ՇՆ 440-79,
14. Կոտայքի մարզի 2017-25թթ. զարգացման ծրագիր :

Հավելված 1.

Ճարտարապետահատակագծային առաջադրանք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳՐԱԳՐԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅՆՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԳԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԱՐԱՔ)

N 152

04 դեկտեմբեր 2023թ.

Օբյեկտ	Նոր մասնաշենքի կառուցում, , , Բարձր ռիսկայնության աստիճանի օբյեկտ` /IV կատեգորիա / (օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն, հակիրճ բնորոշումը, հզորությունը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան))
Աշխատանքային նախագիծ (նախագծման փուլերը և այլն)	Նախագծային փաստաթղթերի մշակման համար
Գտնվելու վայրը	Կոտայքի մարզ, քաղաք Յրազդան (մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)
Կառուցապատող	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԵՎԱՆ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԿ , ք. Յրազդան, 077094343 (կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)
Առաջադրանքի տրամադրման հիմքը	Կառուցապատողի հայտը, սեփականության իրավունքի վկայական N 016828, Եսքիզային նախագիծ (կառուցապատման նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)
Առաջադրանքի գործողության ժամկետը	3 /երեք/ տարի (N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾԿՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է	Բնակավայրերի հասարակական կառուցապատման (հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)
2. (*) Հողամասի չափերը	17.0հա (հողամասի սահմանները՝ կողորհնատային նշահարմամբ, մակերեսը (հա))
3. Հողամասի անկա վիճակը	Գոյություն ունեցող շինություններ (ռելիեֆի բնութագրից, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) անկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)
4. (*) Տրանսպորտային պայմանները	Գործող ճանապարհ (ճանապարհների անկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)
5. Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)	Համաձայն տեխնիկական պայմանների (նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)
6. (*) Կից հողամասեր	Մասնավոր և համայնքային սեփականություն հանդիսացող տարածքներ (կից հիդրոգազգործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)
7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)	Առկա չէ (հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)
8. (*) Հատակագծային սահմանափակումներ	Հաշվի առնել շրջակա տարածքում առկա կառուցապատումը (տեղակայված գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ	Համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015 թ. N596-Ն որոշման՝ մշակել աշխատանքային նախագիծ՝ անշարժ գույքի սեփ. իրավ. վկայականով տրված հողատարածքի սահմաններում, արտաքին տեսքը համապատասխանեցնել տարածքում առկա կառուցապատումների հետ (ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, տակիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գույնային լուծումների վերաբերյալ)
9.1. (*) Օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)	Կարմիր գծով

9.2.(*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)
 9.3.թույլատրելի բարձրությունը (մետր)
 9.4.կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)
 9.5.կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%))
 9.6.կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%))

9.7.այլ պահանջներ

10.Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը
 11.Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները
 12.(*). Ինժեներական ցանցեր և սարքավորումներ
 12.1.(*). ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում

12.2.(*). Էլեկտրամատակարարում

12.3.(*). գազամատակարարում

12.4.(*). Էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը

12.5.թույլ հոսանքներ
 12.6.արքահանություն
 13.Տարածքի ինժեներական նախապատրաստում

14.Բարելավում

15.Ըինարարական նյութեր

16.Պաշտպանական կառույցներ

17.Հակահրդեհային պահանջներ

18.Հաշմանդամների և բնակչության սակավաշարք խմբերի պաշտպանության միջոցառումներ
 19.Շրջակա միջավայրի պահպանում

20.Ըինարարության կազմակերպում

21.Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

22.Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

Միջև 18մ

Ըստ Եսթիգային Նախագծի

Ըստ Եսթիգային Նախագծի

Ըստ Եսթիգային Նախագծի

Հատկապես լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի, շինությունների լուսային բացվածքները նախատեսել նորմատիվային պահանջների ապահովման դեպքում, Տանիքի ջրահեռացումը կազմակերպել բացառելով անձրևաջրերի թափանցումը հարևան հողատարածքներ, կամ ներկայացնել հարևան հողամասերի սեփականատերերի համաձայնեցումը

Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

Կցվում է «ՎԵՈՒՆԱ ՋՈՒՐ» ՓԲԸ «ՀՐԱԶԴԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
 (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

Կցվում է «ՀԱՅԷԼԵՍՆՏ» ՓԲԸ ԳԵՂԱՍՍ ՄՍԾ.
 (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

Կցվում է «ԳԱԶՊՐՈՍԱՐՄԵՆԱ» ՓԲԸ ԿՈՍԱՅԻ ՄՍԾ
 (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

Չի պահանջվում
 (համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

Չի պահանջվում
Սահմանված կարգի համաձայն
Համաձայնեցնել համապատասխան կազմակերպությունների հետ և կազմակերպել տարածքի ջրահեռացումը
 (ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

Շրջակա տարածքի բարելավում և կանաչապատում
 (անոշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գոլազդ և այլն)

Օգտագործել գործող ստանդարտներին համապատասխան շին. նյութեր
 (շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

ՀՀ, 05. 03. 2002 թ., ՀՕ 309 սահմանված կարգով
 (արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

Նախատեսել հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցներ
 (հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

Քաղաքաշինության նախարարի 10.11.2006թ. N253 հրամանով հաստատված նորմերի

Ընկարարական տարածքը տարանջատել շրջակա միջավայրից
 (շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

Ապահովել տրանսպորտի անխափան աշխատանք
 (առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

04/12/2023-ից մինչև 04/12/2026-ը,
 (նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՏՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Համալիր փորձաքննություն
 (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագրող՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

Հրագրանի համայնքապետարանի հետ

(Իրավատու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքում
շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև
ասաջարդանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով բախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

Սահմանված կարգով կազմակերպել հանրային քննարկում

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ
մասնագիտական եզրակացությունների
ստացում

Օրենքով սահմանված կարգով

(Նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու
բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով
սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային
պահարանների տեղադրում
27. Այլ պայմաններ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
Կ.Տ.

ՍԵՎԱԿ ՄԻԶԱՅԵԼՅԱՆ



«Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի գրությունը

VEOLIA
Ջուր
№ 30 / 11 / 2023թ.
N ԱՇ/ԿՅԻԱՅ

ՀՀ Արդարադատության նախարարության
քրեակատարողական ծառայության
գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող
Գամռ Ամիրխանյանին
/հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 63/

Առարկան՝ Պարզաբանում գրության վերաբերյալ

Հարգելի պարոն Ամիրխանյան,

Ի պատասխան Ձեր գրության՝ հայտնում եմ, որ ՀՀ ԱՊ «Մեան» քրեակատարողական հիմնարկի ջրամատակարարումն իրականացվում է Մեան-Հրազդան ժ-500մ պողպատե ջրատարից, միացումն իրականացված է ժ-100մ պոլիէթիլենային խողովակով: Միացման կետից մինչև «Մեան» քրեակատարողական հիմնարկ հեռավորությունը մոտ 900 գծմ է, որից 460 գծմ-ն կառուցված է ժ-100մ պողպատե, իսկ մնացած հատվածը ժ-63մ պոլիէթիլենային խողովակներով:

Առկա տվյալների համաձայն Ձեր ներկայիս ջրածախսը կազմում է 1,5 լ/վ, իսկ նոր մասնաշենքի ջրապահանջը՝ համաձայն Ձեր գրության՝ 3,74լ/վ: Ըստ այդմ՝ ժ-63մ պոլիէթիլենային խողովակում ճանապարհային դիմադրությունը կկազմի մոտ 36մ, ուստի այդ ջրաբանակը տեղափոխելու համար անհրաժեշտ է խողովակի տրամագծի մեծացում:

Հարգանքով՝ *Ալեքս* / *Մ* Գլխավոր տնօրեն
Ս. Շահինյան

Պատասխանում է՝ *Մ* / *ԿՅԻԱՅ* / *Ս* / *23*
Լ. Մարտիրոսյան

ՀՀ, ք. Երևան, 375025, Առույան 66ա
Փոս.՝ 1-85, 0-800-00-185, 011-300-195
Էլ. փոստ՝ am.water.office.all@veolia.com
Կայք-էջ՝ www.veolia.am

RA, Yerevan, 375025, Str. Abovyan 66a
Tel.: 1-85, 0-800-00-185, 011-300-195
E-mail: am.water.office.all@veolia.com
Web site: www.veolia.am

ՃԵՍՏՈՒՆՈՒԹՅՈՒՆ
11864

Գազի թույլտվությունը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

40/6-550/

ՀՀ, ք. Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (374 60) 47-00-60

« 12 » 10 2023 թ.

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ - Ի

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ-ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

ՊԱՐՈՆ ԱՇՈՏ ՀԱԿՈՐՑԱՆԻՆ

Հարգելի պարոն Հակոբյան

Տեղեկացնում ենք, որ ՀՀ ԱՆ «Սևան» քրեակատարողական հիմնարկի տարածքում չափուցվում է կալանավորված անձանց և դատապարտյալների պահման բնակելի նոր մասնաշենք, որտեղ բնական գազի նպատման ժամային ծախսը կազմելու է՝ 15 մ³:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում են ՀՀ ԱՆ «Սևան» քրեակատարողական հիմնարկի ընդհանուր գազամատակարարման վերաբերյալ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությանը ներկայացնել բնական գազի խողովակաշարի թողունակության տեխնիկական եզրակացություն:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԿԱՄՈ ԱՄԻՐԻԱՆՅԱՆ

Կատարող՝ Մ. Խաչատրյան
Կենցաղային ապահովման բաժնի պետ
Խեռ. 060 37 90 90



Закрытое акционерное общество
«Газпром Армения»
(ЗАО «Газпром Армения»)

Котайкский ФГГ

ул. Шумяка, 16, Радан, Котайкская область, Республика Армения, 2001
тс: (374 10) 294-161, ֆաքս: (374 10) 294-161
e-mail: kotsayk@gazpromarmenia.am, gazpromarmenia.am

«Գազպրոմ Արմենիա»
փակ բաժնետիրական ընկերություն
(«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ)

Կոտայքի գգՄ

2001, ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Էրզրույան, Շումյակյան 16
ՈՇՊ: (374 10) 294-161, Ֆաքս՝ (374 10) 294-161
Էլ. փոստ՝ kotsayk@gazpromarmenia.am, gazpromarmenia.am

29. 01 2024 թ.

№ 01-09/134

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ ԿԱՍԻՐՆԱՆՑԱՆԻՆ

Հարգելի պարոն Ամիրխանյան

Ի պատասխան Ձեր 12.10.2023թ. Ե/40/6-5501 գրության տեղեկացնում եմք Ձեզ, որ ՀՀ ՍՆ «Սեան» քրեակատարողական հիմնարկը սնող գազատարի թողունակությունը ապահովում է Ձեր կողմից պահանջվող գազի քանակը:

Հարգանքով՝

Ս. Իսկյան

Փաս. Ս. Բաղդասարյան
Հն. 29-4-51

Հավելված 5
«ՀԷՑ»ՓԲԸ-ի տեխ. պայմանը

Zoom in (Ctrl+Plus key)

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑՆԱՆՆԵՐ» ՓԲԸ
«ԳԵՂԱՄԱ» ՄԱՍՆԱԳՅՈՒՂ

ЗАО "ЭЛЕКТРИЧЕСКИЕ СЕТИ АРМЕНИИ"
ФИЛИАЛ "ГЕГГАМА"

"ELECTRIC NETWORKS OF ARMENIA" CJSC
"GEGHAMA" BRANCH

ՀՀ, 378650, ք. Գրազդան, Ցիգրան Պետիկյանի 5, ☎ (060) 71 14 60, email: Geghama_branch@ena.am
РА, 378650, г. Рваздан, ул. Тиграна Петикяна 5,

« 09 » 11 2023թ.
№ 0779-3384

ՀՀ, ք.Երևան, Արշակունյաց 63
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության
Գլխավոր Զարտուղարի
Պարտականությունները կատարող
Կամո Ամիրխանյանին

Հարգելի պարոն Ամիրխանյան

Ի պատասխան «ՀԷՑ» ՓԲԸ գլխ. տնօրենին ուղղված Ձեր 12.10.2023թ. թիվ 40/6-5503 գրության, կապված ՀՀ ԱՆ «Սևան» Քրեակատարողական Հիմնարկի դրվածքային հզորությունը 90կՎա ավելացնելու համար տեխնիկական եզրակացություն ստանալու հետ, տեղեկացնում ենք, որ Քրեակատարողական Հիմնարկը հանդիսանում է ԽՍՀՄ բաժանորդ, որի 630/10կՎԱ ԳԵ-ի էլ.մատակարարումը իրականացվում է «Գագարին» 110/10կՎ ե/կ-ի 10կՎ օղային գծից: Ամսեկան ծախսը կազմում է 100,000կ-տ/ժամ, որը դրվածքային հզորության մոտ 30% է: Ուստի լրացուցիչ հզորության ավելացման կարիք չկա:

Տնօրեն՝ *Կ. Թադևոսյան* Կ. Թադևոսյան

Կատարող՝ Գ. Մանուկյան

ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ
ՇՈՒԱՑՈՒԹՅՈՒՆ
ՍՈՒՔԻ Մ. 10970
« 09 » 11 2023թ.

